




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ն. Ս. Ն. Ն.

Ն. Ս. Ն. Ն.

Պրոլետարներ ընդդէմ յեղեղներին, միացե՛ք

Ս. Խ. Հ. Մ.
ՌԱԶՄԱՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆՆԸ

(ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

Թարգմ. Հ. Մ ա Ր.

Հավելված Կ.Կ.Բ. Ռազմաճակատի Խորհրդի Նախագահության.

~~ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՊԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴ~~

Պետական Ռազմական Հրատարակչութեան պատվերով
հրատարակել ե Մոսկվայի Ակցիոներական Ընկերութ.

Յ Ե Ր Ե Վ Ս. Ն
1926 թ.

3554
Ա-11

Յ Ա Ն Կ

Ե 2

1. Մ. Վ. Ֆրունզե	4
2. Ի. Ս. Ունշկինս	15
3. Ս. Ս. Բուբնով	25
4. Կ. Յե. Վարաշիլով	35
5. Ս. Ս. Կամենևով	47
6. Ս. Ղ. Լուկաշին	53
7. Ս. Որջոնիկիձե	56
8. Շ. Եկիավա	58
9. Կ. Կ. Ռատնեկ	60
10. Ա. Ի. Կորկ	64

ԴԵԼԵ

ԴԵԼԵ

Ս. Խ. Հ. Մ.


Հ. Ս. Խ. Հ.

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

Ս. Խ. Հ. Մ.

ՌԱԶՄԱՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆԸ

15
21678



(ԿԵՆՏՐԱԿԱՆ ԿՐԹԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԿԱՆ ԿՐԹԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ)



Թարգմ. Հ. Մ. Մ. Մ.

Հավելված Կ. Կ. Բ. Ռազմանեյալովի և Կորկի Նախագահությանը.

Պետական Ռազմական Հրատարակչության պատվերով
հրատարակել է Մոսկվայի Ակցիոներական Ընկերութ.

4237
5137

Յ Ե Բ Ե Վ Ս. Ն
1926 թ.

25 JUL 2013

ПРЕЗИДИУМ РЕВОЛЮЦИОН-
НОГО ВОЕННОГО СОВЕТА
С. С. С. Р.

БИОГРАФИИ
На армянском языке



43640-65

По заказу Государственного Военного Издательства ис-
полнено Московским Издательским Обществом

ЭРИВАНЬ
1926 г.



Միլիտարի Վ. Ֆրունզե

ՄԻԽԱՅԻԼ ՎԱՍԻԼՅԵՎԻՉ ՖՐՈՒՆԶԵ

Միխայիլ Վասիլյեվիչ Ֆրունզեն ծնվել է 1885 թ. Թուրքեստանի Հանրապետության Զետիսուլի (նախկին Սեմիրեչինսկի) շրջանի Պրիշպեկ գավառային քաղաքում:

Նրա հայրը ծագումով Խերսոնի նահանգի Տիրասպոլի գավառի Զախարևսկ գավառակի (այժմ վերանվանված Ֆրունզենսկի) — գյուղացի յե, ազգությամբ ռուսացած մոլդովացի:

Զինվորական ծառայության կանչվելուց ընկնում է Թուրքեստան, վորպես զինվոր, ապա ծառայությունը վերջացնելուց հետո, ընդմիջում փնում է այնտեղ, մտնում է քաղաքային ծառայության, վորպես բուժակ: Մայրը Վորոնեժի նահանգի գեղջկուհիներից է:

Ընկ. Ֆրունզեն սկզբնական կրթությունը ստանում է քաղաքային դպրոցում, ապա Վերնի (այժմ Ալմաթա) քաղաքի գիմնազիայում, ուր 1904 թ. հաջող ավարտում է: Ընկ. Ֆրունզեն 12 տարեկան էր, յերբ հայրը վախճանվում է: Հոր մահվան շուրջից ընտանիքի գոյությունը նյութական պայմանները շատ ծանրանում են և նա մանուկ հասակից ստիպված է դասերով ձեռք բերել մի կտոր հաց իր և ընտանիքի համար: Գիմնազիայի վերջացնելուց հետո ընկ. Ֆրունզեն մտնում է Պետերբուրգի (այժմ Լենինգրադ) բազմաբովանդակ ինստիտուտը:

Ընկ. Ֆրունզեն առաջին ծանոթությունը հեղա-

փոխական շարժման հետ ստացել է դեռ գիմնազիայում սովորելիս, վորտեղ մասնակցել է ինքնակրթության խմբակներում: Պետերբուրգ տեղափոխվելուց, նա մտնում է սոցիալ-դեմոկրատական կուսակ. կազմակերպության մեջ և իսկույն և եթ հարում է Բոլշևիկներին, վորոնց գլխին կանգնած էր ընկ. Լենինը: 1904 թ. վերջերից ընկ. Ֆրունզեն արդեն մասնակցում է զանազան բոլշևիկյան կազմակերպությունների գործնեյություն: Այդ ժամանակին է վերբերում նրա առաջին ռազմական մկրտումը, վորպես մասնակից Պետերբուրգում, 1904 թ. նոյեմ. մեծ հեղափոխական ցույցին, վորտեղ նա ձերբակալվում է և ապա աքսորվում քաղաքից:

1905 թ. սկզբին ընկ. Ֆրունզեն աշխատում է նախ Մոսկվայում, իսկ հետո Վլադիմիրի նահանգում (Իվանովո-Վոզնեսենկ):

1905 թ. դա հեղափոխական շարժումների ու բանվորական մասսաների վերելքի տարին է — ընդդեմ ցարի ու կապիտալիստների: Գործադուլային շարժումը լայն ալիքներով վողողել էր Ռուսաստանը: Իվանովո-Վոզնեսենսկի շրջանը հարուստ է մանվածքային գործարաններով: Այդտեղի մանածագործները (ТЕКСТИЛЬЩИК) գնում էին հեղափոխական շարժումների առաջին շարքերում: Ընկ. Ֆրունզեն 1905 թ. Իվանովո-Վոզնեսենսկի նշանավոր գործադուլի կազմակերպողներից և ղեկավարներից մեկն էր, յերբ այս շրջանի բոլոր գործարանները կանգնեցրել էին աշխատանքը: Նույն 1905 թ. ղեկավարեցրեց ամսում ընկ. Ֆրունզեն ախտիվ մասնակցում է Մոսկվայի բանվորների ապստամբության մեջ: Այդ ապստամբությունը 1905 թ. հեղափոխության ամենափայլուն մոմենտն էր և բանվոր դասակարգի ա-

ռաջին մասնաշաղկան ապստամբությունը Ռուսաստանում:

1905 թվականին ընկ. Ֆրունզեն ընտրվում է պատգամավոր Իվանովո-Վոդնեսենսկի կազմակերպության կողմից III Համառուսական Համագումարին՝ Լոնդոնում, իսկ հետևյալ 1906 թ. կուսակցության IV-րդ Համագումարին՝ Ստոկհոլմում (Շվեդիա): Ընկ. Ֆրունզեն այդ տարիներում հանգիստանում է, վորպես կազմակերպիչ Իվանովո-Վոդնեսենսկի շրջանային կուսակց. կազմակերպության, ապա Իվանովո-Վոդնեսենսկի ՌՍԴԲԿ Միության, վորի մեջ մտնում էին Իվանովո-Վոդնեսենսկի, Շուի, Կինեշմի, Տեյկովի և ուրիշ կուս. կազմակերպությունները: Ընկ. Ֆրունզեն իր հեղափոխական աշխատանքի այդ առաջին տարիներին համար մի քանի անգամ ձերբակալվել է:

1907 թվականի սկզբում, յերբ ցարական իշխանությունը, ճնշելով 1905 թ. հեղափոխությունը, դատ եր սկսել բանվոր դասակարգի և բոլշևիկների կուսակց. ղեկավարների դեմ, ընկ. Ֆրունզեն ձերբակալվում է Շույա քաղաքում (Իվանովո-Վոդնեսենսկու նահանգում): Սկզբում նրան մեղադրում են բոլշևիկյան կուսակցության անդամ լինելու համար և դատապարտում են չորս տարվա տաժանակիր աշխատանքի: Այնտեղ ընկ. Ֆրունզեն վնասիկանություն գինված ընդդիմադրության գործի համար նորից յենթարկում են դատի. ցարական զինվորական դատարանը ընկ. Ֆրունզեյին դատապարտում է մահվան պատժի: Գլխավոր զինվորական դատարանի կողմից դատավճիռը փոխվում է ընկ. Ֆրունզեյի այդ գործի մասնակցության վերաբերյալ ապացույցներ չլինելու պատճառով: Նշանակվում է նոր դատ, և գործը դրվում է նոր վերաքննության: Նոր դատարանը

ընկ. Ֆրունզեյին նորից դատապարտում է մահվան պատժի, փոխարինելով այդ վեց տարվա տաժանակիր աշխատանքով: Ընկ. Ֆրունզեն պետք է կրեր այդ վեց տարվա պատիժը հնաշված առաջին 4 տարին: Ընկ. Ֆրունզեն պատիժը կրեց նախ Վլադիմիրի (5^{1/2} տարի), ապա Նիկալաևի (2 տարի) և վերջապես Ալեքսանդրովի Կենտրոնական տաժանքի-տներում (Սիբիրում): 1914 թ. վերջերին ընկ. Ֆրունզեն աքսորվում է Իրկուտսկի նահանգի Վերխուենսկ գավառը: Բայց շուտով բանտարկվում է 1915 թ. աքսորահանների կազմակերպություն ստեղծելու համար: Ընկ. Ֆրունզեն բանտ նստելուց ազատվում է փախուստով և 1915 թ. վերջերին անլեգալ ապրում է Ջաբալյակսկի նահանգում Վ. Գ. Վասիլենկո օղզանվան տակ: Ուրիշ ընկերների հետ միասին նա կազմակերպում է բոլշևիկյան «Վաստոչնոյե Որոգրենիյե» շարաթաթերթը և դառնում է դրա խմբագիրներից մեկը: Վոստրիկանությունը հայտնաբերում է թերթի տեղը և ընկ. Ֆրունզեն՝ փրկվելով նոր ձերբակալումից, փախչում է Ռուսաստան: Այստեղ նա «Միխայիլով» օղզանվան տակ մտնում է ծառայության Համառուսական Զեմստվոյի (Земский Союз) Միության մեջ և աշխատում արեվմտյան ռազմաճակատում մինչև 1917 թ. հեղափոխությունը: Ընկ. Ֆրունզեն ցարական բանակում անլեգալ կազմակերպություններ է ստեղծում: Փետրվարյան հեղափոխությունից քիչ առաջ ընկ. Ֆրունզեն արդեն անցնում է ընդհատակյա հեղափոխական կազմակերպությունների գլուխ, վորոնց կենտրոնը գտնվում էր Մինսկ քաղաքում, իսկ բաժանմունքները Արևմտյան Ռազմաճակատի 3 և 10-րդ բանակներում:

Ընկ. Ֆրունզեն Փետրվարյան հեղափոխության

սկզբից դառնում է Բելոռուսիայում և Արեւմտյան Ռադամաճակատում հեղափոխական շարժումների ղեկավարներից մեկը: Մինսկում նա ղեկավարում է վստախկանության և ժանդարմերիայի զինաթափումը և դառնում է քաղաքացիական միլիցիայի պետ: Նա Փետրվարյան հեղափոխությունից հետո Մինսկում կազմակերպում է Բանվորների Պատգամավորների Սորհուրդ և աշխատում է, վորպես նրա Գործկոմի մըշտական անդամ: Նա ամբողջ Բելոռուսիայում կազմակերպում է Գյուղացիական Պատգամավորների Սորհուրդներ, անց է կացնում Բելոռուսիայի գյուղացիական յերկու համագումար, և ինքը դառնում Գյուղացիական Պատգամավորների Սորհրդի և Գործկոմի նախագահ: Յերբ հրավիրվում է պատգամավորների Գյուղացիական Համագումարին համագումար, ընկ. Ֆրունզեն Բելոռուսիայի գյուղացիական խորհուրդների կողմից զնուհ է Համագումար, վորպես պատգամավոր և ընտրվում է Համագումարին համագումարի նախագահության անգամ:

Ընկ. Ֆրունզեն ռադամաճատում ևս տանում է խոշոր աշխատանք: Մի շարք ուրիշ ընկերների հետ նա աշխատում է զինվորական կազմակերպություններում, կազմակերպում է Արեւմտյան ռադամաճակատի բանակի համալումար: Համագումարում նրան ընտրում են ռադամաճակատի կոմիտեյի անգամ: Միաժամանակ ընկ. Ֆրունզեն խմբադրում է այն ժամանակ Մինսկում լույս տեսնող բոլշևիկյան «Զվեզդա» (Աստղ) լրագիրը:

Գենեըալ Կառնիլովի հակա-հեղափոխական ապրստամբության որերին, ընկ. Ֆրունզեն Մինսկի Սորհուրդի Գործկոմի և ռադամաճակատի կոմիտեյի

կողմից ընտրվում է Մինսկի շրջանի հեղափոխական զորքերի շտաբի պետ:

Դրանից հետո շուտով, 1917 թ. ոգոստոսի վերջին հեղափոխվում է Իվանովո-Վոդնեսնսկի շրջանի Շույա քաղ., վորտեղ մինչև աքսորվիլը նա աշխատել էր: Շույա քաղաքում ընկ. Ֆրունզեն ընտրվում է քաղաքային գումայի, գավառային հողային վարչության և Բան., Գյուղաց. ու Զինվորների Պատգամավորների Սորհրդի նախագահ:

Հոկտեմբերյան Հեղափոխության որերին ընկ. Ֆրունզեն անցնում է Շույա-Իվանովի շրջանի ղինված ուժերի գլուխ և հոկտեմբերի 30-ին 2000 բանվորներից և զինվորներից բաղկացած ղինված ջո. կատի գլուխ անցած՝ գալիս է Մոսկվա ու անմիջական մասնակցություն է ցույց տալիս Մոսկվայի փողոցներում Սորհուրդների իշխանության համար մղվելիք կռիվներին:

Սորհրդային իշխանության հաստատվելուց հետո, յերբ Իվանովո-Վոդնեսնսկի նահանգը կազմակերպված էր, ընկ. Ֆրունզեն ընտրվում է նահանգային Գործկոմի նախագահ: Նա միշտ յեղել է նախագահ Շույայի գավառային և Իվանովո-Վոդնեսնսկի նահանգային բոլշևիկյան կուսակց. կոմիտեյի, Ս-րդ Համագումարից սկսած նա ընտրվել է բոլոր խորհուրդների համագումարներին: Վլադիմիրի նահանգը ընկ. Ֆրունզեյին բոլշևիկյան կուսակցության կողմից ուղարկել է Համագումարական Հիմնադիր Ժողով:

1918 թ. դարնան և ամառվա ընթացքում ընկ. Ֆրունզեն նահանգային Գործկոմի, կուսակցության կոմիտեյի նախագահի պարտականությունների հետ տարել է նաև նահանգային ռադական կոմիտարի և

ժողովրդական Տնտեսության Խորհրդի Նախագահի
պաշտոնները:

Յարութավլի հակահեկափոխական ապստամբությունը ճնշելուց հետո, ընկ. Փրունդեն նշանակվում է Յարութավլի շրջանային (ОКРУГ) ռազմական կոմիտար, իսկ 1918 թ. դեկտեմբերին, յերբ ագմբալ (ծովակալ) Կոլչակը, զրավելով Սիրիը հառաջ է լրադում Մոսկվա, ընկ. Փրունդեն նշանակվում է Արեւիկյան ռազմաճակատի IV-րդ Բանակի հրամանատար:

1919 թ. ապրիլին, յերբ Կոլչակի բանակը հասել էր Խոբհրդալին Ռուսաստանի վրա կազմակերպված հարձակումների ամենաբարձր զարգացման, յերբ ստեղծվել էր մեծ վտանգ ու սպառնալիք Կազանին, Սիմբիրսկին և Սամարին, ընկ. Ֆրունզեն նշանակվում է Արևելյան ռազմաճակատի հարավային մասնախորս բանակների (4-րդ, 1-ին, Թուրքիստանի և 5-րդ) հրամանատար։ Ընկ. Ֆրունզեն կազմակերպում է ու հասցնում խոշոր հարված Բուզուլուկի կողմից հարձակվող Կոլչակի բանակների գործաթևին (փախչ)։ Այդ գործաթևը զգալի չափով հարվածում է կոլչակովյիներին, անհաջողության և մասնում Կոլչակի հարձակողական գործողությունը (операция) և ստիպում է նրա բանակին յետ նահանջել ամբողջ Արևելյան ճակատով։

Մնալով Հարավային գորախմբակի հրամանա-
տար, նա անխիչականորեն ղեկավարում է Թուրքես-
տանի բանակը, վորը գործում է Ուֆայի ուղղու-
թյամբ և հաջող անց է կացնում Ուֆայի ուղերա-
ցիան: Ուֆայի վրա հարձակման ժամանակ, Կրասնի
Յար գյուղի մոտ Սպիրտակ գետը անցնելիս, ընկ.
Ֆրունզեն, Իվանով-Վոդնեսենսկի գնդի առաջապա-

դիրքերում վերափոխում և հակառակորդի ուղանալից
ձգած ուժերից: Ուֆայի մոտ տարած ալդ հերոսական
սպիտակաշորի համար ընկ. Ֆրունզեկն պարզատրվում
է հարմիր դրոշի շքանշանով:

Հունիսի վերջին ընկ. Ֆրունզեն նշանակվում է Արևիկայան ճակատի բոլոր բանակների հրամանատար, հաջորդությամբ ղեկավարում է բոլոր ապստամբական գործողությունները մինչև կարմիր զորամասերով Չեխարինսկի գրավելու մոմենտը ու ամբողջ ռազմաճակատով Ուրալյան լեռների անցնելը:

Ոգոստոսին Արեվելյան ռազմաճակատը բաժանվում է յերկու ուղղության՝ Սիբիրի և Թուրքեստանի ռազմաճակատի (11-րդ, 4-րդ, 1-ին և Թուրքեստանի զորքերը) հրամանատար: Ընկ. Ֆրունզեն սեպտեմբերի ընթացքում աստիճանաբար և ռազմական գործողություններ, շրջապատում ու վոճնչացնում է Կոլչակի հարավային բանակը, վորը գտնվում էր գեներալ Բելիյի հրամանատարության տակ: Վորպես հետևանք այդ գործողությունների, վերականգնվում է կապը Թուրքեստանի հետ, իսկ Որենբուրգի կազակները անցնում են Խորհրդային իշխանության կողմը: Ընկ. Ֆրունզեն ղեկավարելով ընթացքում Ուրալի ռազմաճակատների լիկվիդացիայի համար ղեկավարում է մի շարք ոպերացիաներ, վորը հաջողությամբ վերջացնում է՝ գեկտեմբերի վերջին Գուրև քաղաքը և Կասպից ծովի ափերը գրավելով:

Մնալով Թուրքեստանի ռազմաճակատի բանակ-
ների հրամանատար, ընկ. Ֆրունզեն նշանակվում է
Համառ. Կենտրոն. Դործ. Կոմ. Թուրքեստանի գործե-
րով զբաղվող հանձնաժողովի անդամ և Նույնպիս
Ռ. Կ. Կ. (Բ.) Կենտ. Կոմիտեյի Նույնանման հանձնա-
ժողովի անդամ:

1920 թ. փետրվարից մինչև ոգոստոս ամիսը ընկ. Ֆրունզեն աշխատում է Թուրքեստանում և ղեկավարում է Սեմերեշինսկի սպիտակ-գվարդիականների ռազմաճակատի լիկվիդացիայի գործողությունները: Ոգոստոսի վերջերին Բուխարայի հեղափոխական ժողովուրդը ապստամբվում է ու տապալում էմիրին: Այդ ժամանակ ընկ. Ֆրունզեն կարմիր բանակի գործամասերով ոգնում է հեղափոխական իշխանությունից ամբաստանող և ապստամբվածներին հեռմիասին մաքրում և մանուկ հանրապետությունը էմիրի սպիտակ գվարդիականներից:

1920 թ. սեպտեմբերին ընկ. Ֆրունզեն նշանակվում է Հարավային Ռազմաճակատի հրամանատար, վորը գործում էր Վրանգելի դեմ: Նոյեմբերի վերջերին վերջացնում է Հարավ-Ռուսիայի հակահեղափոխությունից լիկվիդացիայի գործողությունը և գրավում Ղրիմի թերակղզին: Այդ նշանավոր պանծալի ռազմական արշավանքի (кампания) համար ընկ. Ֆրունզեն Ն. Կ. Գ. Կ.-ից ստանում է հեղափոխական պատվավոր զենք՝ սուր շքանշանով և Կարլ Մարքսի նկարով համապատասխան մակագրություն:

Արտաքին ռազմաճակատների լիկվիդացիայից հետո ընկ. Ֆրունզեն նշանակվում է հանրապետությունից Ռազմահեղափոխական Խորհրդի լիազոր Ուկրաինայում և վերջինիս բոլոր զինված ուժերի հրամանատար:

Նրա անմիջական ղեկավարությունից լիկվիդացիայի յե յենթարկվում պետությունը շինան և մախնով շինան: Նա 1921 թ. Պոլտավայի հահանգի Ռեշետովկա գյուղի տակ, հետախուզման ժամանակ շրջապատված լինելով մախնովցիներից, աջ կողից ստա-

նում է կրկնակի վերք: Նրա վերարկուն յոթ տեղից գնդակով ծակնուվում է, և պատահականությունը միայն նրան փրկում է մահից: Նա կրկին պարգևատրվում է Կարմիր դրոշի շքանշանով:

1920 թ. նոյեմբերյան համաուկրաինական կոնֆերենցիայում ընկ. Ֆրունզեն ընտրվում է Ուկրաինայի Կոմ. Կուս. (Բ) Կենտրոն. Կոմիտեի անդամ, իսկ Ուկրաինայի խորհուրդների համագումարին՝ Համաուկրաինական Կենտգործկոմի անդամ:

Ընկ. Ֆրունզեն անդամ է Համաուկրաինական Կենտգործկոմի՝ սկսած Խորհուրդների III-րդ Համագումարից: Ռ. Կ. Գ. (Բ) 10-րդ Համագումարում ընտրվում է Կենտկոմի անդամ, ֆնալով այդպիսին մինչև այժմ:

1924 թ. ապրիլի 1-ին ընկ. Ֆրունզեն նշանակվում է Ս. Խ. Հ. Մ. Ռազմահեղափոխական Խորհրդի Նախագահի տեղակալ և ընկ. Տրոցկու յերկարատե հիվանդությունից շնորհիվ, փաստացի ղեկավարում է Կարմիր Բանակը: Միաժամանակ ընկ. Ֆրունզեն Բան. գյուղաց. Կար. Բանակի շտաբի, Ռազմական Ակադեմիայի պետ էր և Բարձրագույն Ռազմական Խմբագրական Խորհրդի նախագահ:

1925 թ. հունվարի 26-ին Ս. Խ. Հ. Մ. Կենտգործկոմը ընկ. Ֆրունզեյին նշանակում է Ռազմական և Ծովային Գործերի Ժողովրդական Կոմիսար և Ս. Խ. Հ. Մ. Ռազ. Հեղափ. Խորհրդի նախագահ:

Ընկ. Ֆրունզեն անդամ է Ռ. Կ. Գ. (Բ) Կենտ. Կոմիտ. Ուկրաինայի Կոմկուսի Կենտկոմի և Ս. Խ. Հ. Մ. Կենտգործկոմի Նախագահությունից:



Իոսիֆ Ստանիսլավովիչ Ունշլիխտ

ԻՈՍԻՖ ՍՏԱՆԻՍԼԱՎՈՎԻՉ ՈՒՆՇԼԻԽՏ

Իոսիֆ Ստանիսլավովիչ Ունշլիխտը ծնվել է Լեհաստանի Պլոցկի նահանգի Մլավա քաղաքում: Միջնակարգ և բարձրագույն կրթությունը (ճարտարապետ) ստացել է Վարշավայում:

Դեռ պատանի հասակից ընկ. Ունշլիխտը մասնակցել է հեղափոխական շարժման: 1900 թ. նա մըտնում է հեղափոխական սոց. դեմոկրատիայի շարքերը և վորպես անդամ աշխատում է Լեհաստանի և Լիտվայի թագավորությունից սոցիալ-դեմոկրատիայի մեջ: Ընկ. Ունշլիխտը այդ ժամանակից անընդհատ աշխատում է բոլշևիկյան կուսակցության շարքերում, գործունյա մասնակցություն է ցույց տալիս կուսակցության շինարարության և հանդիսանում, վորպես համոզված ու հետևողական լենինեցի: 1900 թ. մինչև 1913 թ. շրջանում ընկ. Ունշլիխտը մասնակցում է, վորպես պատգամավոր յերկու կուսակցական համագումարի և Լեհաստանի ու Լիտվայի սոցիալ-դեմոկրատիայի մի շարք համա-յերկրային կուսակցական կոնֆերենցիաներին: Վորպես Լեհաստանի և Լիտվայի ներկայացուցիչ, նա մասնակցում է Ռ. Ս. Դ. Բ. Կ. լոնդոնյան համագումարի աշխատանքներին: Ընկ. Ունշլիխտի անունը հայտնի է սիրելի յե գառնում այնպիսի խոշոր արդյունաբերական բանվորական շրջաններում, ինչպիսին են՝ Վարշավայի, Լոձի և Դոմբրով-

սկուռ ածխահանքի շրջանները: Նրա անունը միաժամանակահատվածի հայտնի չէ դառնում ցարափան ժանդարմերիային: Ընկ. Ունչլիխաբը, հետապնդվելով վոստրիկանությունից և լեհական սև հարյուրյակից, ամենայն կերպ խուսափում է հմիգրացիայից, ապրում է անլեգալ անցագրերով (паспорт), տեղափոխվում է քաղաքից քաղաք մինչև անդամ 1907 թ.—1911 թ. սև բեակցիայի շրջանում լեհական պրոլետարիատի մեջ չի ընդհանուրմ յեռացող բոլշևիկյան աշխատանքը: Նա յեղել է անդամ Վարշավայի նահանգական, Լոձի շրջանային (округ) կոմիտեի ու Լեհաստանի և Լիտվայի համայնքակրային բոլշևիկյան կոմիտեի:

1911 թ., յերբ Լեհաստանի և Լիտվայի սոց. դեմոկրատիայի մի քանի ղեկավարները փորձ արին քննադատության յինթարկելու լենինյան սկզբունքները՝ կուսակցության կազմակերպման և նրա գործելակերպի (ТАКТИКА) լենինյան յիդանակները, ընկ. Ունշլիխաթը դրանց դեմ բացահայտ պայքար և մղում: Նրա կողմն են անցնում Վարշավայի և Լոձի կադմակերպուկությունները. նրան պաշտպանում են կուսակցության խոշոր կազմակերպությունների կադմակերպված բանվորները: Կուսակցության մեջ հակալենինյան տենդենցների դեմ մղված այդ պայքարը, վոր գտնվում եր ընկ. Ունշլիխտի անմիջական ղեկավարության տակ, կրմտնի լեհական բանվորական շարժման և բողշեիկյան մտքի զարգացման պատմության պայծառ եջերը:

Այդ մտմենտից ե, վոր ընկ. Ունշլիխտը Իլլիշի հետ
մտերմանում ե: Իսկ այդ մտերմությունը մինչև ընկ.
Լենինի մահը չընդհատվեց:

Իր հեղափոխական գործնեյության համար ընկ.
Ռանշլիխտը ցարական իշխանության կողմից լինթար-

Կլվում է բազմաթիվ ընկալելիքներով: Առաջին անգամ նրան ընտարկում են 1902 թ., ապա հետևում են 1903, 1906, 1907, 1909 և 1913 թ. թ. բանտարկությունները: Այդ ժամանակվա ընթացքում նա շատ ամիսներ անց է կացնում բանտերում և յենթարկվում է յերեք վարչական արտաքսման, վորոնք սակայն, չեն խանգարում կուսակցական աշտանքի շարունակման, վորովհետև ընկ. Ունշլիխտին յուրաքանչյուր անգամ հաջողվում էր անլեգալ վերադառնալ Լեհաստան և շարունակել աշխատանքը ուրիշ անվան տակ: 1916 թ. Մոսկվայի Դատաստանական Պալատը դատապարտում է ընկ. Ունշլիխտին աքսորի: Նա շղթայակալ հանապարհորդում է մի տաժանքի բանտից մի ուրիշը, մինչև վոր հասնում է իր պատժավայրը Յակուտսկի նահանգը: Չնայած այդ ծանր տանջանքներին, այստեղ ընկ. Ունշլիխտը չի կորցնում իր հեղափոխական յեռանդը և հոգու աշխուժությունը: Դա ուրիշներին շատ քիչ է հաջողվում: Բանվոր բոլշևիկ ընկ. Միտիվիշը, հանդիպելով ընկ. Ունշլիխտին և նրա բախտակիցներին Իրկուտսկի աքսորավայրում, այսպես է նկարագրում իր տպավորությունները այդ հանդիպումից.

«Հողորոճ տանջանքներից և հալածանքներից, նրանք իրենցից ներկայացնում եյին հեղափոխութեան հաշմանդամներ, վորոնց անհասկանալի յեր հեղափոխական համարձակութիւն: Ծերերի աչքում մինք մի նոր տեսակ մարդիկ եյինք: Նրանց մեջ աչքի յեր ընկնում միայն Ունշիխաւը, Լեհական Ս. Դ. Բ. Կ. անդամ, վորը մեզ հետ էր Ալեքսանդրովյան տաժանքի տներում: Սարգսյանները, ինչպէս զորույցներ եր տանում: Տաժանքի յաւանդակ միակ աշխուժ ու

կենդանի ընկերն էր («Пролетарская Революция», № 4, էջ. 232, 1922 թ.):

Փետրվարյան հեղափոխությունն ընկ. Ունշլիխտին աղատում է աքսորից:

Մինչև 1917 թ. ապրիլ ամիսը Իոսիֆ Ստանիսլավովիչը աշխատում է Իրկուտսկու տեղական Գործկոմում և բոլշևիկյան կուս. կոմիտեյում: 1917 թ. ապրիլին հնարավորություն է ստեղծվում տեղափոխվել հեղափոխության կենտրոն՝ Պետրոգրադը, վերադառնալ շարունակում է հեղափոխական բոլշևիկյան աշխատանքը ու դառնում է Պետրոգրադի Խորհրդի Լեն. և Լիտ. սոց. դեմոկ. Կ. Կ. անդամ, միաժամանակ մասնակցում է բոլշևիկների Պետրոգրադի կազմակերպության ընդհանուր կուսակց. աշխատանքներին: Պետրոգրադից ընկ. Ունշլիխտը բոլշևիկների ցուցակով ընտրվում է Հիմնադիր ժողովի անդամ: Հուլիսյան նշանավոր ուրերին, յերբ Կերենսկին փորձ արեց ավերման յենթարկել Պիտերի բոլշևիկյան կազմակերպությունը, ընկ. Ունշլիխտը, ինչպես նաև մյուս ակտիվ բոլշևիկներն ընկնում են «Կրեստի»*) մեջ:

Բանտից ազատվելուց հետո՝ նա կրկին բոլշևիկյան առաջապահ, գիրքերում է գտնվում: Անդադար պայքար է մղում մենշևիկների և Կերենսկու կողմնակիցների հետ և պատրաստում բանվոր դասակարգի կողմից իշխանություն զբաղեցնելու գործը: Հոկտեմբերյան հեղաշրջման ուրերին նա լինում է անդամ Պետրոգրադի Ռադմահեղափոխական կոմիտեյի: Նրանք, ովքեր հնարավորություն են ունեցել նրա աշխատանքին հետևելու այդ ուրին Սմոլյնիում, կամ զորանոց-

ներում ու զործարաններում բանվորների և զինվորների մեջ, հիացել են վոչ միայն նրա յեռանդի, իր գործի արդարացի լինելու համար, այլ և սառը հանգստություն և կատակներ անելու վրա, վոր հատուկ է նրան մինչև անգամ ամենայն բեկյուղալի և որհասական վայրկյաններին, վորոնց թիվը քիչ չէր ապստամբության ուրերին:

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, ընկ. Ունշլիխտը տանում է մի շարք պատասխանատու պաշտոններ: Ի. Ս.-ի աշխատանքի ընտրող հատկությունը կայանում է նրա մեջ, վոր կուսակցությունը նրան առաջ է քաշում ավյալ մոմենտի համար հույժ կարևոր և պատասխանատու աշխատանքի: 1918 թ. սկզբին ռադմական հանձնարարություն է ստանում կազմակերպելու Պսկովի շրջանի պաշտպանությունը: Ընկ. Ունշլիխտն աշխատում է բացառիկ դժվարին պայմաններում: Հին բանակը ցիր ու ցան էր յեղել գերմանացիների գրոհի տակ: Նրանց փոխարեն առաջ են քաշվում Պիտերի առանձին բանվորական պարտիզանական զորախմբակները, վորոնք լավ չէին տիրապետում զենքին, բայց լցված էին հեղափոխական վոգեվորությունը: Այնուամենայնիվ, այդ զորախմբակները հաջողությամբ կատարում էին իրենց վրա դրած գերը և կանգնեցնում են գերմանական զորքերին Պետրոգրադից զգալի տարածություն վրա: Հետագայում, ընկ. Ունշլիխտը, վորպես ներքգործողի մի կոլլեգիայի անդամ, նշանակվում է գերիների և գաղթականների գործերով զբաղվող կենտրոնական կոլլեգիայի նախագահ: Այն ժամանակ դա չափազանց պատասխանատու աշխատանք էր: Ռադմագերիները Ռուսաստանում այն ժամանակ միլիոններով էին հաշվվում, յեռյակ միությունը պահան-

*) «Կրեստ» դա քաղաքական հանցավորների համար առանձին տեղն է, վորտեղ պատժում են:

Ջուժ եր անհապաղ վերադարձնել, թեկուզ մեր յերկրի տնտեսական կյանքի և տրանսպորտի վերջնական քայքայման գնով: Մոսկվայում նստել եր կոմս (гпаф) Մերբախը, վորը հենվում եր այն ժամանակվա կայսերական Գերմանիայի ու Բրեստի զաշնազրի վրա և վորձում եր թելադրելու իր կամքը: Հարկավոր եր ունենալ այդպիսի պատասխանատու պաշտոնում խոհեմ և միաժամանակ կայուն բոլշևիկ, և կուսակցութեան Կենտ. Կոմ. ընտրութեանը ընկնում և Իոսիֆ Ստալինը: Ստալինը վրա:

Վիլհելմին տապալելուց հետո, այդ պաշտոնի կարևորութեանը ընկնում և, և ընկ. Ունշլիխտը գործուղվում և արևմտյան ռազմաճակատը: Այստեղ ծագում են նոր ազգային խորհրդային յերկրներ՝ Բելոռուսիա և Լիտվա: Անտանտան, հենվելով Լեհաստանի «խնդնութեան և անկախ» բուրժուազիայի վրա, այստեղ փորձում և ստեղծել հակա-խորհրդային ճակատ: Ընկ. Ունշլիխտն ընտրվում և Լիտվայի և Բելոռուսիայի Կոմ. Կուս. Կենտ. Կոմիտեի անդամ և նշանակվում և Բելոռուսիայի ու Լիտվայի ռազմական գործերի ժողովրդական կոմիտար:

Այգոստի ընկ. Ունշլիխտին մենք տեսնում ենք վոչ միայն իր սուսնաճանաչակում ալ և հաճախ հրացանը ձեռքին առաջապահ զիրքերում: Ամենքին հայտանի յև՝ մի բուռն կարմիր-բանակայինների և կոմյերիտականների հերոսական կռիվները Վիլնայի փողոցներում ընդդեմ լեհական զորամասերի: Ընկ. Ունշլիխտն ամբողջ որերով մնալով հակառակորդի հրացանի կրակի գոտում (зона) անմիջապես ղեկավարում և այդ կռիվները: Վիլնայի և Մինսկի անկումից հետո ընկ. Ունշլիխտը նշանակվում և բանակի Ռազմահեղափոխական խորհրդի անդամ, ապա 1919 թ. գեկտեմ-

բերին, յերբ պարզվեց, վոր Լեհաստանը պատրաստվում և վճռական զինված պայքարի մեր դեմ՝ նշանակվում և Արևմտյան ռազմաճակատի Ռազմահեղափոխական խորհրդի անդամ: Այստեղ նա գործադրում և բացառիկ յեռանդ՝ մինչև այդ ժամանակ անուշադրութեան մատնված ռազմաճակատի այնքան պատասխանատու խնդիրներին լուծման վրա: Մի շարք միսնեբի ընթացքում, որեց-որ ընկ. Ունշլիխտը, որվա մեջ աշխատելով 20 ժամ, չիմանալով և թույլ չտալով իրեն հանգստութեան, չթուլացնելով աշխատանքի թափը, ի հայտ և բերում բացառիկ յեռանդ և աշխատունակութեան: Ռազմական գործողութեանները սկսվելուց՝ ընկ. Ունշլիխտը դուրս և գալիս առաջապահ զիրքերը, վորպեսզի ռազմաճակատի հրամանատարի հետ միասին տեղում իրագործի ղեկավարութեանը:

Ընկ. Ունշլիխտը մի գործամասից մի ուրիշն անցնելու ժամանակ՝ ծանր մնասվածք և ստանում (վոտը կտրվում և և զլիւից վերք և ստանում), բայց դա ել յերկար ժամանակ նրան չի հասնում շարքից: Արդեն մի քանի որից հետո, մահճակալում պառկած, նա հեռախոսով և հեռագրով կապվում և մի շարք ափելի խոշոր կետերի (пункт) հետ և շարունակում և իր Ռազմահեղափոխորդի անդամի աշխատանքները: Ճակատի Ռազմահեղափոխորդի բոլոր աշխատանքներին նա անմիջական մասնակցութեան և ցուցատու, բնդունում և ընկերներից ղեկուցումներ և ռազմաճակատի դրութեան մասին տեղեկացնում և կուսկենա. կոմիտեին: Միայն նրա մտերիմ բժիշկները զիտեյին, թե ինչպիսի ծանր գնով և իրագործել այդ բոլորը:

Ընկ. Ունշլիխտը 1921 թ. օգոստիին՝ Լեհաստանի հետ խաղաղութեան կնքելուց Կրոնշտադտի լիկվիդա-

ցայից հետո՝ նշանակվում է Համառ. Արտակ. Հանձնաժողովի նախագահի (ներկայումս Պ. Ք. Վ.) տեղակալ: Ինչպես հայտնի չէ, Յեմլրոպայի կապիտալիստական կառավարությունները կարծում էին, վոր խորհրդային իշխանութիւնը զորացրումից հետո չի կարող դիմանալ, վորովհետև նա ամբողջ յերկիրը համախմբել է արտաքին վտանգի դեմ. գյուղացիութիւնը և բանվոր դասակարգը կառավարեն նոր պահանջներ, վորոնց իշխանութիւնը չի կարող բավարարութիւն տալ: Անտանտան բաց է թողնում ահագին գումարներ մեր յերկրի ներսում հակա-հեղափոխական շարժումներ կազմակերպելու համար: Տամբուլում ծագում է հայտնի «անտոնովշինան», Սովինկովը սկսում է լարված աշխատել, սահմանից դեպի մեր յերկրի ներսն են խուժում բազմաթիւ քղինված հրոսակախմբեր (բանդաներ): Պ. Ք. Վ.-յան առաջ կանգնում են պատասխանատու խնդիրներ և կուսակցութիւնը ընկ. Ունշլիխտին նշանակում է այդ պատասխանատու պաշտօնին, վորի մեջ նա մնում է մինչև 1923 թ. աշնանը:

1923 թ. աշնան բարդացած միջազգային դրութիւնը առաջին տեղն է քաշում Կարմիր բանակի շահերը: Բարձրանում է Կարմիր բանակի արմատական վերակազմակերպման խնդիրը և անարտադրողական ծախքերի կրճատումը (բանակի հոսունութիւնը (текучесть), հիմնարկների ուղղած շտատները և այլն): Ընկ. Ունշլիխտը նշանակվում է Ս. խ. Հ. Մ. Ռազմ. Հեղ. Խորհրդի անդամ և առաջ մատակարարման պետ: Մեր առաջ կանգնած էր վերին աստիճանի կարևոր խնդիր՝ կանոնավորել Կարմիր բանակի բյուջեն, բարելավել նրա անձնական կազմի և մասնավորապես հրամանատարների նյութական դրութիւնը. Ընկ. Ուն-

շլիխտը դարձնում է իր ամբողջ ուշադրութիւնը այդ լուրջ աշխատանքին և զգալիորեն նպաստում նրա հաջող կատարման: Ընկ. Ունշլիխտը գտնվելով պատասխանատու պաշտօններում յերբեք չի ընդհատել ստորին կուսակցական աշխատանքները: Նա վոչ միայն գուրս է յեկել կարմիր բանակայինների և բանվորների ժողովներին, այլ և աշխատել է տեղական կուս. կոմիտեներում, խորհուրդներում և բջիջների բյուրոներում: Լեհական Կոմ. Կուս. մեջ նա ամենահեղինակավոր ընկերներից մեկն է: Իոսիֆ Ստանիսլավովիչը յերբեք չի խզել իր կապը Լեհաստանի բանվորների հետ, վորի ծոցից գուրս է յեկել նա և վորի մեջ ստացել է առաջին հեղափոխական մկրտումը և բոլշևիկյան կոմիսիոնար:

1925 թ. փետրվարի 6-ից Ս. խ. Հ. Մ. Կ. Գ. Կ. ի նախագահութեան վորոշմամբ ընկ. Ունշլիխտը նշանակվում է ռազմական և ծովային գործերի ժողովրդական կոմիտարի տեղակալ և Ս. խ. Հ. Մ. Ռազմ. Հեղ. Խորհրդի նախագահ: Ընկ. Ունշլիխտը սկզբից յեկել է անդամ Կենտրոն. Գործ. Կոմիտեյի և պատգամավոր շատ կուսակցական համագումարների: Վերջին համագումարին ընկ. Ունշլիխտն ընտրվում է Ռ. Կ. Կ. (բ)՝ Վերաքննիչ Հանձնաժողովի անդամ:



Անդրեյ Սերգեյեվիչ Բուբնով

ԱՆԴՐԵՅ ՍԵՐԳԵՅԵՎԻՉ ԲՈՒԲՆՈՎ

Անդրեյ Սերգեյեվիչ Բուբնովը ծնվել է 1883 թ. ապրիլի 6-ին (մարտի 23-ին) Իվանովո-Վոդնիսկոյե քաղաքում: Ընկ. Բուբնովը սովորել է Իվանովո-Վոդնիսկոյե քաղաքում: Բուբնովը սովորել է 1904 թ. Հետո մանում է Մոսկվայի գյուղատնտեսական ինստիտուտը, ուր ընկ. Բուբնովին չի հաջողվում ավարտել կուսակցական աշխատանքին նվիրվելու պատճառով:

1900-1901 թ. թ. ընկ. Բուբնովը ղեկ յերիտասարգ հասակում մասնակցում է ուսանողների հեղափոխական խմբակների աշխատանքներին: 1903 թ. նա մանում է Ռուս. Սոց.-դեմ. բանվորական կուսակցության մեջ և հարում բոլշևիկյան Ֆրակցիային: Ընկ. Բուբնովը կուսակցության մեջ առաջին տարիներին աշխատում է կենտրոնական նահանգներում և Մոսկվայում, գործարաններում բանվորների մեջ, տանում է պրոպագանդա և քաշում նրանց բոլշևիկյան կուսակցության աշխատանքներին: Ցարական կառավարությանը, հատկանալի յե, բոլշևիկ Բուբնովի աշխատանքը չի թողնում առանց ուշադրության՝ մի քանի անգամ նրան բանտարկում և նստեցնում է բանտերում ու բերդերում: Այն շրջաններում, վորտեղ աշխատել է ընկ. Բուբնովը, իբր յեռանդուն աշխատանքով գրավում է կուսակցական մասսաների համա-

կրթութիւնը: 1905 թ. ամառվանից նա Իվանովո-Վոդնե-սենսկի կուս. կոմիտեի անդամ է, ապա դառնում է Ռ. Ս. Դ. Բ. Կ. (բ.) Իվանովո-Վոդնեսենսկի բյուրոյի անդամ: Բյուրոն միացնում է մի շարք տեղային կազմակերպութիւններ: 1906 թ. Իվանովո-Վոդնեսենսկու կուսակցութեան կազմակերպութիւնը ընկ. Բուբնովին ընտրում է Համառուսական IV համագումարին, վորը կայացել էր Ստոկհոլմում (Շվեդիա): Հետեյալ, 1907 թ. ընկ. Բուբնովը նույն կազմակերպութիւնից ընտրվում է Համառուսական V-րդ համագումարին Լոնդոնում (Անգլիա): Կուս. կենտ. Կոմիտեն 1907 թ. ընկ. Բուբնովին տեղափոխում է Մոսկվա աշխատելու, իսկ 1907 թ. վերջին ընկ. Բուբնովը ընտրվում է կուսակցութեան Մոսկվայի կոմիտեի անդամ:

Դժգոյքի ժամանակներ էյին: Ցարական կառավարութիւնը, խեղդելով 1905 թ. հեղափոխութիւնը, անողորմ դատ էր սկսել հեղափոխութեան մեջ մասնակցողներին՝ առանձնապէս կոփոված հեղափոխական բողշեիկներին դեմ: Վախկոտները, անվճռականները, փափկամարմինները թողել հեռացել էյին կուս. կազմակերպութիւնից, մենշեիկներն էյին պրոպագանդա տանում, վորպեսզի թողնեն ընդհատակյա պայքարը. նըրանք ասում էյին, վոր հեղափոխութիւնը վերջացել է և անհրաժեշտ է լիկվիդացիայի յենթարկել կուսակցական կազմակերպութիւնները և հարմարվել ցարական ռեժիմի սահմաններում՝ նոր պայմաններին ու լեզալ աշխատանքի անցնել: Միայն բողշեիկներին իսկական տոկոսն մասը՝ ընկ. Լենինի գլխավորութեամբ՝ հեղափոխութեանը հավատարիմ էր մնացել ու շարունակում էր համառ պայքար տանել կուսակց. ընդհատակյա ապարատի պահպանութեան և բանվոր դասակարգի ընկած տրամադրութիւնը բարձրացնելու հա-

մար: Լենինյան այդ գվարդիայում էր գտնվում և ընկ. Բուբնովը: Հետապնդվելով ցարական վոստիկանութեան և ժանդարմերիայի կողմից, քանիցս բանտարկված՝ Բուբնովը յեռանդուն շարունակում է տանել կուսակցական աշխատանքը: 1908 թ. ընկ. Բուբնովը ընտրվում է Կենտրոնական Արդյունաբերական շըրջանի շըջանային կուսակցական Բյուրոյի անդամ: Նա նույն տարում ընտրվում է Համառուսական կուս. կոնֆերենցիային, բայց ցարական ժանդարմերիայից բանտարկվում և չի գնում կոնֆերենցիա:

Բանտից ազատվելուց հետո (1909 թ. գեկտեմբերին) ընկ. Բուբնովը նշանակվում է կուս. կենտ. կոմիտեի գործակալ (ներկայացուցիչ), 1910 թ. մայիսին նա մտցվում է բողշեիկյան «Կենտրոն»-ի կազմի մեջ Ռուսաստանում: Բայց ընկ. Բուբնովին չի հաջողվում յերկար աշխատելու: Նույն տարվա վերջին նրան կրկին բանտարկում են: 1911 թ. ազատվելով բանտարկութիւնից, ընկ. Բուբնովը շարունակում է իր հեղափոխական աշխատանքը Նիժնի-Նովգորոդում և Սճրմովի մեքենայաշինարարական գործարանում: Նույն տարում ընկ. Բուբնովին մտցնում են Համառուս. կոնֆերենցիա հրավիրող Կոմիտեի կազմի մեջ, և պիտի ճանապարհվեր արտասահման, բայց նորից ժանդարմերիա՞ն բանդարկում է: Ընկ. Բուբնովին կոնֆերենցիայում ընտրում են բողշեիկյան կուսակ. կենտ. Կոմիտեի թեկնածու: Ընկ. Բուբնովը մի քանի ընկերների հետ 1911 թ. Պոլովոսկայում հրատարակում է «Պոլովոսկայա Բըիլ» լրագիրը: Ցարական իշխանութիւնը, ի հարկե, այդ լրագրին հետապնդում է, և հաջողվում է բաց թողնել միայն վեց համար: Դրանից հետո ընկ. Բուբնովը տեղափոխվում է Լենինգրադ (նախկին Պետերբուրգ) աշխատանքի և աշխատում է այն

տեղ բոլշևիկյան «Պրավդա» լրագրում, Պետերբուրգի կուս. Կոմիտեյում և հանդիսանում է միենույն ժամանակ Կոմիտեյի Գործադիր հանձնաժողովի անդամ: Ընկ. Բուրնովը նույնպես մասնակցում է Պետական Դումայի բոլշևիկյան ֆրակցիայի աշխատանքներին:

Համաշխարհային կռիվն ընկեր Բուրնովին մենք տեսնում ենք Սարկովում, ուր ուղարկվել էր Պետերբուրգում բանտարկվելուց հետո: Ընկեր Բուրնովը պատերազմի հենց սկզբից բռնում է հետևողական ինտերնացիոնալիստի դիրք: 1914 թ. ոգոստոսի սկզբներին, Սարկովի բոլշևիկյան կազմակերպության պատերազմի դեմ ուղղված կոչից հետո, ընկ. Բուրնովը կրկին բանտարկվում է և բանտարկելությունից հետո արտաքսվում է Պալտավա քաղաքը: Ընկ. Բուրնովը, տեղափոխվելով Պալտավայից Սամարա, մտնում է Նիժնի Պավլովայի շրջանի բոլշևիկյան կազմակերպությունների կոնֆերենցիա հրավիրող Կազմակերպչական Բյուրոյի մեջ:

1916 թ. հոկտեմբերին ընկ. Բուրնովը բանտարկվում է և 1917 թ. փետրվարին աքսորվում Տուրուխան (Սիբիր): Դա ընկ. Բուրնովի վերջին բանտարկությունն է լինում:

Ընկ. Բուրնովը ցարական կառավարությունից բանտարկվել և տասնեյրեք անգամ և չորս տարուց ավել նստել է բանտերում և բերդերում:

Փետրվարյան հեղափոխությանն ընկ. Բուրնովին մենք հանդիպում ենք Յենիսեյսկի և Կրասնոյարսկի նահապարհի վրա Բորովկա գյուղի ետապի խրճիթում:

Փետրվարյան հեղափոխությունից հետո վերադառնալով Մոսկվա, ընկ. Բուրնովը ցույց է տալիս ակտիվ մասնակցություն կուսակցական աշխատանքներին: Ընկ. Բուրնովը մտնում է Կենտրոնական Ար-

շտանաբերական նահանգի բյուրոյի մեջ: Ապրիլյան Համառուսական կուս. կոնֆերենցիային նա ընտրվում է Կենտ. Կոմիտեյի թեկնածու: Կուսակցության VI համագումարն ընկեր Բուրնովին ընտրում է Կ. Կ.-ի անդամ: Միաժամանակ նա աշխատում է, վորպես անդամ Մոսկվայի Բանվորական Պատգամավորների Սորհրդի Գործկոմի: 1917 թ. ոգոստոսին Կենտ. Կոմիտ. ընկ. Բուրնովին տեղափոխում է Պետրոգրադ, ուր նա աշխատում է, վորպես կուս. Կենտ. կոմիտ., Պետրոգրադի Սորհրդի Գործկոմի անդամ և Կենտկոմի ներկայացուցիչ կուսակց. ռազմական լրագրում:

1917 թ. հոկտեմբերի 10-ին կուսակց. Կենտ. Կոմիտեյի նիստին ընկ. Բուրնովը ընտրվում է Կ. Կ. Քաղ. Բյուրոյի մեջ, իսկ հոկտեմ. 16-ին՝ մտնում է ապստամբությունը ղեկավարող ռազմա-հեղափոխ. Կենտրոնական շտաբի մեջ՝ վորպես անդամ և մասնակցում է Հոկտեմբերյան հեղաշրջման ղեկավարությունը: Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո ընկ. Բուրնովը նշանակվում է Սորհրդային Հանրապետական յերկաթուղիների կոմիսար: Ընկ. Բուրնովը զործուղվում է Ռուսաստանի հարավային մասը, վորտեղ մասնակցում է գեներալ Կալեյկինի դեմ մղված կռիվին, անմիջապես մասնակցում է Ռոստովի զինված ապստամբությանը (1917 թվի նոյեմբերի 27-ից — դեկտեմբերի 2-ը):

1918 թ. ընկ. Բուրնովին կուսակց. Կենտկոմը ուղարկում է Ուկրաինա, վորտեղ մտնում է Ուկրաինայի Բան. Գյուղաց. կառավարության կազմի մեջ և մասնակցում գերմանական զորքերի դեմ մղվող կռիվներին, վորը առաջ եր բերել Ուկրաինայի բուրժուազիան Բան. Գյուղացիական իշխանությունը ձեռնարկում:

Գերմանական զորքերը հեղեղում էին Ուկրաինան և ժամանակավորապես խեղդեցին այնտեղ հեղափոխությունը: Ընկ. Բուբնովը, վորպես այն ժամանակ Ուկրաինայի Կոմկուսի Կենտկոմի անդամ, մտնում է ապրտամբական (повстанческий), ապա Ռազմահեղափոխական կոմիտեները, վորոնք իրենց նպատակ էին դրել կազմակերպելու ուժեղ պարաիդանական զորաբանակ Ուկրաինան ազատագրելու համար:

1918 թ. հոկտեմբերին ընկ. Բուբնովը գործուղվում է ընդհատակյա աշխատանքի Կիև: Այն ժամանակ Կիևը սպիտակ գվարդիականների կենտրոնն էր: Քաղաքը վողոված էր բազմաթիվ վոստրիկաններով և ժանդարմներով, թե՛ գերմանական և թե՛ սպիտակ-ուկրաինական, վորոնք անողոք հալածանք էին սկսել մինչև անգամ ամենաթեթև հեղափոխական արարքի մեջ նկատված ընկերների դեմ:

Ընկ. Բուբնովը՝ հմուտ զաղսնապահ և կազմակերպիչ է: Լինելով Կիևի նահանգային կուսակց. ընդհատակյա բյուրոյի անդամ, նա հարթում ու հղկում է ընդհատակյա աշխատանքը: Նա միևնույն ժամանակ Կիևի ընդհատակյա խորհրդի նախագահ և շտաբի պետ էր: Հեղափոխական աշխատանքը սկսում է շուտ ծավալվել: Ամբողջ Ուկրաինայում աճում է և ամրանում է ապստամբական շարժումը: Բանվորների և գյուղացիների համառ պայքարով Ուկրաինան մաքրվում է գերմանական զորքերից և ուկրաինական սպիտակ գվարդիականներից:

Ուկրաինայում խորհրդային իշխանություն հաստատվելուց, ընկ. Բուբնովը մտնում է Ուկրաինայի բանվորա-գյուղացիական կառավարության կազմի մեջ՝ վորպես Ժողովրդական կոմիսար:

1919 թ. գարնան ընկ. Բուբնովը գործուղվում է կուսակցության VIII-րդ համագումարին և այնտեղ ընտրվում է Ռ. Կ. Կ. (բ.) Կենտ. Կոմ.-ի թեկնածու և կուսակցության ծրագիրը մշակող հանձնաժողովի անդամ: Միաժամանակ նա Կիևի բանվոր. գյուղ. պատգամ. խորհրդի նախագահ է դառնում:

1919 թ. Կուս. Կենտկոմը ընկ. Բուբնովին ուղարկում է ղինվորական աշխատանքի և նշանակում Ուկրաինայի ճակատի Ռազմահեղխորհրդի անդամ, ապա XIV-րդ բանակի Ռազմահեղխորհրդի անդամ: 1919 թ. հոկտեմբերին ընկ. Բուբնովը նշանակվում է Կազլովի հարվածող (ударная) զորախմբակի Ռազմահեղխորհրդի անդամ: Այդ ժամանակ՝ գեներալ Մամոնտովի հեծելազորի ճակատի ճեղքման (прорыв) և Կազլով-Տամբով շըրջանում անհամար կուլակային ապստամբությունների ժամանակն էր: Ահա, այնտեղ էլ, կուսակցությունը ընկ. Բուբնովին Կարմիր Բանակում նշանակում է պատասխանատու աշխատանքի: 1920 թ. Բուբնովը նշանակվում է Մոսկվա տնտեսական աշխատանքի և Մոսկվայում ընտրվում է կուս. կոմիտեյի անդամ:

Բայց ահա նորից, փոքր զաղարից հետո, սկսվում է ղինվորական ծանր աշխատանքը: Ընկ. Բուբնովը նորից գնում է ղինվորական աշխատանքի և նշանակվում Հյուսիս. Կովկասի Ռազմահեղխորհրդի անդամ:

Ընկ. Բուբնովը միաժամանակ յեղել է Դոնի նահանգական կուս. կոմիտեյի և Ռ. Կ. Կ. (բ.) Կենտր. Կոմ.-ի Հարավ Արևելյան Ֆերկրային բյուրոյի անդամ:

1921 թ. գարնան ընկ. Բուբնովն ընտրվում է կուս. X-րդ համագումարին պատգամավոր: Համագու-

մարի աշխատանքների ժամանակ կրոնշտատումը ընդ-
նկվում է ապստամբություն: Կուսակցական Համագու-
մարը հավաքում է իր անդամներին և ուղարկում է
Կրոնշտատի նոր ճակատը: Դրանց թվում էր գտնվում
և ընկ. Բուբնովը, վոր Կրոնշտատի ապստամբության
ճնշման մեջ ցույց է տվել գործոն մասնակցություն:
Ընկ. Բուբնովը գրա համար պարգևատրվում է Կար-
միր Դրոշի Շքանշանով:

Քաղաքական կռիվը վերջանալուց հետո, ընկ-
Բուբնովին տեղափոխում են Կուս, աշխատանքի և նը-
շանակում են Կուսակցության Կենտրոն. Կոմիտեյի:
ազիտ-պրոպ բաժնի վարիչ: XII-րդ համագումարին
ընկ. Բուբնովը ընտրվում ն Կ. Կ.-ի թեկնածու, իսկ
XIII-րդ համագումարին Կենտկոմի անդամ:

1924 թ. սկզբին ընկ. Բուբնովը նշանակվում է
Ս. Խ. Հ. Մ. Ռ. Հ. Խ. անդամ և Կարմիր Բանակի-
Քաղաքական վարչության պետ, վորպիսի պաշտոն նա
վարում է մինչև որս: Ընկ. Բուբնովը նույնպես Ռազ-
մաքաղաքական Ակադեմիական դասընթացների պե-
տըն է: Միաժամանակ ընկ. Բուբնովը աշխատում է
Կուս. Կենտ. Կոմիտեյում՝ վորպես անդամ Կադմբյու-
րոյի: Նա անդամ է նաև Ս. Խ. Հ. Մ. Կ. Գ. Կ.-ի:

Ընկ. Բուբնովը հին Կուսակցական գրականա-
գետ է: Ընկ. Բուբնովը վաղուց է, վորը զբաղվում է
հեղափոխական շարժումների և մեր Կուսակցության
պատմության ուսումնասիրությամբ: Այդ բնագավա-
ռում նրան է պատկանում բոլորին հայտնի «Կոմու-
նիստական Կուսակց. գործադման հիմնական մո-
մենտները Ռուսաստանում» բրոշուրը, վոր բաղմա-
թիվ անդամ հրատարակել են Նահանգային Կոմի-
տեները: Ընկ. Բուբնովի տնտեսական աշխատանքնե-
րի շարքից պետք է նշել «Решные хлебные фракты»

հրատ. 1915 թ., նույնպես պետք է հիշատակել մի
շարք հոգվածներ ու տեսություններ ընդհանուր գյու-
ղատնտեսական հարցերի վերաբերյալ «Земельный Агро-
ном» (Սամարա) և Խարկովի ու Պատավայի գյուղ-
տնտ. ամսագրերի մեջ:

Ներկայումս ընկ. Բուբնովը զինվորական «Крас-
ная Звезда» լրագրի պատասխանատու խմբագիրն է
և բարձրագույն Ռազմակ. Խմբագրակ. Խորհրդի նա-
խագահ:



Կլիմենտ Յեֆրեմովիչ Վարաշիլով

ԿԼԻՄԵՆՏ ՅԵՖՐԵՄՈՎԻՉ ՎԱՐԱՇԻԼՈՎ

Կլիմենտ Յեֆրեմովիչ Վարաշիլովը ծնվել է 1881 թ. հունվարի 23-ին Յեկատերինոսլավի նահանգի Բախմուտ գավառի Վերինեյե գյուղում:

Նրա հայրը բառարակ գյուղացի յեր:

Հասկանալի չէ, թե ինչու նա ուղևորված էր 6 տարեկան հասակից տանել քարածխի հանքահորերում (maxtի) ծանր աշխատանք:

Նա ընդամենը սովորել է յերկու ձմեռ ժողովրդական դպրոցում, ուր ավարտում է 1895 թ.:

Ընկ. Վարաշիլովը տանում է զանազանակերպ աշխատանք կալվածատիրոջ կալվածքում, վորտեղից նա հնար է գտնում ծանր աշխատանքից պոկվել յերկու ձմեռ և սովորել:

1896 թվից նա մտնում է Յեկատերինոսլավի նահանգի Ալեկսեյ կաշարանի մոտ գտնվող Դյումի գործարանը: Այդ ժամանակվանից է սկսում նրա քաղաքական գործունեությունը:

Նա 1889 թ. արդեն հեղափոխական աշխատանքի վրա կրում է առաջին խուզարկությունը և բանտարկությունը:

1900 թ. ընկ. Վարաշիլովը մի քանի անգամ յենթարկվում է խուզարկության, արձակվում է գործարանից և վոստիկանությունը նրա վրա լրիստ հսկողություն է նշանակում:

Ծանր դրութիւնն եր ապրում այն ժամանակ ընկ. Վարաշիլովը: Ամբողջ յերկու ու կես տարի նա ստիպւած եր առանց աշխատանքի թափառել Դոնբասի բոլոր գործարանները և հանքերը, ուր նա զինուում եր գործի մտնելու համար, բայց վոչ մի կերպ չեր հաջողվում, վստովհետե նրա ազգանունը մտած եր հատուկ սե գիւք, վոր կազմել էյին կապիտալիստները հեղափոխականների հաշվառման համար:

Վոստիկանության ծածուկ հսկողութիւնը փոխվում է նրա կողմից վարձով նշանակված յերկու մարդկանց կողմից լապարձակ հետազոտման: Խնչպես շվաք այդ յերկու անձնավորութիւնները հետապնդում են ընկ. Վարաշիլովին. մի քանի անգամ, նրանք զիշերը փայտերով հարձակվում են ընկ. Վարաշիլովի վրա մի խուլ ներքափողոցում, ծեծում և շարստում են աւով մեջ:

1903 թ. ընկ. Վարաշիլովին հաջողվում է մտնել Լուգանսկ քաղաքի շոգեմեքենայաշինարարական գործարանը: Համարյա նա միաժամանակ մտնում է սոց. Դեմոկրատ. կազմակերպության մեջ, իր կուսակցական աշխատանքի առաջին ժամանակաշրջանին ցույց է տալիս և ի հայտ բերում իրեն՝ վորպես ամուր ու կոփված բռնիկ և ընտրվում է Լուգանսկի կոմիտեյի անդամ:

1905 թ. սկզբին ընկ. Վարաշիլովը ղեկավարում է գործադուլը: 1905 թ. մայիսին յերկրորդ գործադուլը ղեկավարելու համար վոստիկանութիւնը բանտարկում է ընկ. Վարաշիլովին: Ութ ամիս բանտ նըստելուց հետո, նա գրավականով ազատվում է Լուգանսկի բախվորների ճնշման տակ:

Դեռ 1905 թ. սկզբին, փետրվարյան գործադուլից հետո, ընկ. Վարաշիլովն ընտրվում է Գարամանի շոքեմեքենայաշինարարական գործարանի բանվոր-

ների պատգամավորական ժողովի նախագահ այդ պաշտոնում քնում է մինչև բանտարկութիւնը: Բանտից ազատվելուց հետո վերադառնում է գործարան, նորից անցնում պատգամավորական ժողովի գլուխը, վորն այդ ժամանակ ձեռք է բերում չափազանց մեծ քաղաքական նշանակութիւն վոչ միայն Լուգանսկի համար, այլ և շրջակա գյուղերի և կողակների ստանիցաների համար (չեն), վորոնք գտնվում էյին Լուգանսկի բանվորների քաղաքական և վարչական ղեկավարության տակ:

1906 թ. փետրվարին ընկ. Վարաշիլովն ընտրվում է սոց. դեմ. կուսակց. Ստոկհոլմի համագումարի պատգամավոր: Նույն տարվա հունիսին նա ընտրվում է արհմիության նախագահ և միաժամանակ մի շարք ընկերների հետ կազմակերպում է մի քանի ռազմական ջոկատներ:

1906 թ. ամռան և աշնան ընթացքում ընկ. Վարաշիլովը, Լուգանսկի կոմ. կոմիտեյի հանձնարարութեամբ՝ Պիտերի վրայով գնում է Ֆինլանդիա պրովետարական ռազմական ջոկատների (Дружина) համար գենք գնելու: Պիտերի կոմիտեյի աջակցութեամբ՝ մասնավորապես ընկ. Զինովյեի և նրա ընկ. Սվյազինի (ներկայումս մահացած), նրան հաջողվում է կապվել Ֆինլանդիայի հեղափոխականների հետ, վորոնց միջոցով ձեռք է բերում զգալի քանակութեամբ գենք և անվտանգ տեղափոխում Դոնբաս:

1906 թ. հոկտեմբերին, ընկ. Վարաշիլովը դառնում է դատաստանական պալատում, բայց Լուգանսկի բանվորների այդ առթիվ կայացրած ընհանուր գործադուլը խանգարում է ցարական դատին:

1907 թ. մարտ ամսին դատաստանական պալատը

վերաքննում ե ընկ. Վարաշիրովի գործը և արդարացնում է:

1907 թ. ընկ. Վարաշիրովը ընտրվում է կուսակցութեան Լոնդոնի համագումարին:

1907 թ. յուլիսին կիւում կայացած կուսակց. Հարավ-Ռուսիայի կոնֆերենցիայից հետո, վորին ընկ. Վարաշիրովն ընտրված էր պատգամավոր, բանադրվում է հոկտեմբերին և յերեք տարով աքսորվում Արխանգելսկի նահանգը:

Նույն տարվա դեկտեմբերին նրան հաջողվում է փախչել աքսորից, վորից հետո կենտկոմը նրան ուղարկում է Բագու կուսակցական աշխատանքի:

Նա Բագվում 1908 թ. հունվարից մինչև սեպտեմբեր աշխատում է՝ վորպես նավթարդյունաբերող բանվորների արհմիութեան քարտուղար Բիրի-Եյբաթում, միաժամանակ ընկ. ընկ. Շահումյանի, Ստալինի հետ դառնում է Բագվա կուս. կոմիտեի անդամ:

1908 թ. հոկտեմբերին նա արդեն գտնվում է Պիտերում: Այստեղ վոստրիկանությունը նրան «կրեւտ»ում նստեցնելուց հետո աքսորում է նորից Արխանգելսկի նահանգը: Աքսորում ընկ. Վարաշիրովը չի ընդհատում և շարունակում է իր հեղափոխական գործնեցությունը:

1910 թ. հունվարին Սալմազորում քաղաքական աքսորականների կազմակերպման համար ընկնում է Արխանգելսկի բանտը 11 ամսով: Բանտում ընկ. Վարաշիրովը հայտարարում է հացադուլ 5 և 8 օր տևողութեամբ: Արխանգելսկի բանտից ազատվելուց հետո, նա նորից մի տարով աքսորվում է, վորը մինչև վերջը անց է կացնում Մեզենսկ գավառում:

Ազատվելով աքսորից 1912 թ. վերջին, ընկ. Վարաշիրովը մտնում է ծառայութեան Ալշեսկի կայարանի

բանվորական կոոպերատիվում և նորից սկսում կուսակցական աշխատանքը, բայց քիչ շանցած նա ելի բանտարկվում է: Դեկտեմբերին նրան կարճ ժամանակով հաջողվում է ազատվել. 1913 թ. հունվարին նրան նորից ձերբակալում են և յերեք ամսվա բանտարկությունից հետո, ուղարկում են յերկու տարով աքսոր Ձերգինսկի շրջանը: 1914 թ. ընկ. Վարաշիրովն ազատվում է և վերադառնում իր սիրելի Դոնբասը: Այստեղ ել վոստրիկանությունն իր խուզարկություններով և սպառնալիքներով հանգստություն չի տալիս նրան: Ընկ. Վարաշիրովը մի կերպ անցնում է Յարիցին և մտնում թնդանոթային գործարանը:

Յարիցինի թնդանոթային գործարանում ընկ. Վարաշիրովն անձամբ հավաքում է իրան քաջ հայտնի հին բոլշևիկ-լուգանցիներին և գործարանում կազմակերպում է կուսակցական բջիջ:

Վրա յե հասնում իմպերիալիստական կռիվը:

Յարական իշխանությունը վայրագացած ցիրուցան է անում Յարիցինի կազմակերպությունը, խլելով ամեն ոք առանց այն ել հեղափոխականների նոսր շարքերից նորանոր զոհեր:

Յարիցինում ընկ. Վարաշիրովին այլևս մնալն անհնարին է, և նա 1915 թ. մայիսին տեղափոխվում է Պետերբուրգ:

Յերկար հալածանքներից քայքայված ջղերով և առողջութեամբ՝ ընկ. Վարաշիրովը դժվարութեամբ Պետերբուրգում մտնում է Սուրգայլո նորաթուխ կապիտալիստի փոքրիկ գործարանը:

1916 թ. ընթացքում ընկ. Վարաշիրովը կապվում է Պետրոգրադի բոլշևիկների հետ և նորից վոստրիկանութեան կողմից յենթարկվում խուզարկութեան:

1917 թ. փետրվարին ընկ. Վարաշիլովը բարձրացնում է ապստամբություն ցարական թիկնապահական (гвардейский) գնդում (Իվմաշիլովկա): Սուրբաշևը գործարանից նա ընդունվում է Պիտերի խորհրդում պատգամավոր: Պիտերի խորհրդում ընկ. Վարաշիլովը ընկ. ընկ. Մուրադովի, Շլյապնիկովի, Պադվոսկու և ուրիշների հետ կազմում է բոլշևիկների ֆրակցիա և դառնում զրա անդամը:

1917 թ. մարտ ամսին նա տեղափոխվում է Պետրոգրադից Դոնբասս: Նա Լուգանսկում նորից անցնում է բոլշևիկյան կազմակերպություն փերականգնման գործին, մի քանի շաբաթվա ընթացքում՝ հին բոլշևիկներից կազմվում է 40—50 հոգուց բաղկացած մի կուռ պրոլետարական կազմակերպություն, վորոնք վոստիկանություն անողոք ձևումից ցրվել էյին և անցել ընդհատակյա աշխատանքի:

Այդ կազմակերպությունն առաջին քայլից բռնում է կայուն հեղափոխական բոլշևիկյան դիմ, վորով առաջ են բերում վոչ միայն իշխանություն պուլս անցած մանր բուրժուազիայի՝ այլև մենշևիկներով ու սոց. հեղափոխականներով դրաված բանվորների մի վորոշ մասի ատելությունը:

1917 թ. ընկ. Վարաշիլովն ընտրվում է համառ. կուռակց. կոնֆերենցիայի պատգամավոր, վորից վերադառնալուց հետո, յեռանդուն կերպով տանում է պրոլետարիատի և նրա կազմակերպության բոլշևիզացիան: Լուգանսկի կազմակերպությունը շուտով իր աշխատանքն ու ազդեցությունը տարածում է ամբողջ գավառում և Դոնբասսում:

Հուլիսին Կլիմենտ Յեֆրեմովիչը պատգամավոր է ընտրվում V-րդ կուռ. համագումարին: Ոգոստոսին նա ընտրվում է Լուգանսկի քաղաքային վարչության

(дума) նախագահ, իսկ մի քանի օրից հետո, բոլշևիկները դեն են չպրտում մենշևիկների բռնությունը խորհուրդներում և ընկ. Վարաշիլովը դառնում է Լուգանսկի խորհրդի նախագահ:

Այդ ժամանակ չափազանց լարված դրություն է ստեղծվում Դոնբասսում: Ուկրաինայում լայն ծավալ ընդունած շովինիզմը և ծրագրվող կողակային հակահեղափոխությունը ստիպում է Լուգանսկի կազմակերպություն լինել չափազանց զգուշ:

Առանձին ուշադրություն պետք էր դարձնել Լուգանսկի փամփուշտի գործարանի պահպանություն, վորը այն ժամանակ սպիտակ կողակների և «աչքածակ» ուկրաինացիների համար զայթակղության առարկա յեր դառել:

Հոկտեմբերյան օրերը վրա յեն հասնում: Ընկ. Վարաշիլովը հրաժարվում է գնալու խորհուրդների V-րդ համագումար, յերկյուղ կրելով կողակներով շրջապատված քաղաքի համար: Լուգանսկն արդեն պրոլետարիատի ձեռքին էր և պետք էր ձեռքում ամուր պահել:

Նոյեմբերին ընկ. Վարաշիլովն Յեկատերինսկավի նահանգից ընտրվում է հիմնադիր ժողովի անդամ և գնում է Պետրոգրադ:

Նրա ճանապարհվելու առթիվ կայացրած հանդիսավոր նիստին, բանվորական մասսաները նրան տալիս են պատգամ, յեթե հիմնադիր ժողովը չիրագործի հոկտեմբերի կամքը, պետք է յենթարկել ցրման ու բանտարկման: Նույն ամսին նա Պետրոգրադի խորհրդից նշանակվում է քաղաքի կոմիտար և մի շաբաթ ուրիշ ընկերների հետ ոգնում է ընկ. Դեբեժնիսկուն կազմակերպելու Հ. Ա. Հ. (Համառուս. Արտ. Հանձնաժող.). 3—4 ամսվա ընթացքում ընկ. Վարաշիլովը

կոմիտարի պաշտոնում տանում ե ուժեղ աշխատանք։
Պետրոգրադում կարգը վերականգնելու և զրա հետ
միասին անհնդատ մասնակցություն և ցուց տալիս
Հ. Ա. Հ. աշխատանքներին։

1918 թ. մարտին ընկ. Վարաշիլովը գնում և Ու-
կրայնա։ Ժող. տնտ. խորհ-ի խարկովի համագումարին
նրան ընտրում են Ժ. Տ. Ս. ի նախագահության ան-
դամ, բայց մի շարքից հետո, Լուգանսկի բանվորնե-
րից նա կազմակերպում է 1 Լուգանի սոցալիստական
պատերազմական ջոկատը (отряд), վորով դուրս ե
գալիս Ուկրայնայի մի մասը գրավող գերմանացիներ
ի դեմ։ Կոնտոտոյ քաղաքի տակ ընկ. Վարաշիլովի
գործախմբակը մտնում է ընդհարման մեջ գերմանացի-
ների հետ։ Մի ամսվա ընթացքում՝ գործախմբակը գրա-
նվում է անընդհատ ընդհարումների և կոիվների մեջ
հակառակորդի գերադանց ուժերի հետ։ Գերմանացի-
ները մոտենում են խարկովին, ընկ. Վարաշիլովը
ստանում է հանձնարարություն պաշտպանել Սանովա-
կայարանը (խարկովի արվարձանը)։ խարկովը թող-
նվում է։ Ընկ. Վարաշիլովը յետ շարքերով հակառա-
կորդին, չի կարողանում բարձե վազոնները։ Հաղիվ
նրան հաջողվում է ձեղքել ռազմաճակատը և ուղղվել
դեպի Չուգույեվո քաղաքը։

Նրան հաջողվում է՝ գիշերները մթուժյան, ցե-
րեկները ձորերի շնորհիվ գործախմբակը յերթով ան-
վնաս դուրս բերել, անցնելով 200 վերստ ճանապարհ։
Ապրիլի 15-ին ընկ. Վարաշիլովը նշանակվում է
Ուկրայնայի V-րդ բանակի հրամանատար և մի քա-
նի գործառասերով նորից շարժվում է Լուգանսկից
Կուպյանսկի ուղղությամբ ու մտնում է ընդհարման
մեջ գերմանական զորքերի հետ։ Նորից ծանր կռիվ-

ներ և նահանջներ։ Վրա յե հասնում ամենածանր կը-
ռիվների շրջանը։

Ուկրայնայի կարմիր գործախմբերը՝ շրջապա-
ված Լուգանային հակա-հեղափոխական ողակով և հե-
տապնդված գերմանական զորքերից, յետ են նահան-
ջում Լուգանսկից դեպի Ֆարիցին։ Ահագին քանա-
կությամբ հեղինները՝ լցված բանվորների ընտանի-
քով խզուկ կահ-կարասիքով, մթերքներով և ռազմա-
մթերքներով, յերեք ամսվա ընթացքում շարժվում
են մինչև Ֆարիցին։

Սպիտակ գվարդիականները գեներալ Մամոնտո-
վի, Ֆիցիսկաուրովի և ուր. գլխավորությամբ անընդհատ
հաբձակվում են կարմիր գործառասերի վրա, փորձելով
ձեղքել կարմիր պարտիզանների յերկաթյա շարքերը
և գրավել հեղինները։

Սպիտակ կողակները վոչ միայն փչացնում էին
յերկաթուղու կամուրջները, վորտեղով կարմիրները
պիտի անցնեին, այլև տեղ-տեղ փչացնում ու քան-
դում էին ամբողջ ճանապարհը։ Կարմիր պարտիզա-
նական խմբակներում քիչ չէին այնպիսիները, վո-
րոնք մինչև հիմա ել քիչ են մտածում կոիվների և
շատ յերազում հեշտ շահի մասին։ Հարկավոր եր կար-
գապահություն, ամրակուսություն։ Այլ կերպ բոլորի
կործանումն եր։

Ընկ. Վարաշիլովին՝ գերմարդկային ուժերով,
անքուն գիշերներով և մշտական անձնական որինա-
կով հաջողվում է գործախմբակում ստեղծել խիստ
կարգապահություն և հաջող հասցնել գործախմբակնե-
րն ու հեղինները Ֆարիցին։

Միանալով խորհրդային զորքերին, վոր գործում
էին Ֆարիցինի պաշտպանության համար, ընկ. Վա-
րաշիլովը նշանակվում է X-րդ բանակի հրամանա-

տար և Ռազմ. Հեղ. Խորհրդի անդամները, Ը. Ստու-
լինի և Մինինի հետ միասին կազմակերպում և Յա-
րիցինի պաշտպանությունը: 1918 թ. ամառը, աշնանը
և ձմեռվա սկիզբը Յարիցինի վրա տեղի յեն ունենում
խստագույն զրոհներ, վորոնք X-րդ բանակի զորմասե-
րից հաջողությամբ յետ են շարժվում:

1918 թ. նոյեմբերին Վարաշիլովը նշանակվում
է Ուկրաինայի բան. գյուղ. կառավարութան անդամ,
իսկ 1918 թ. փետրվարին ընտրվում է Ուկրաինայի
ներքին գործերի կոմիտար:

Նա նույն տարվա ապրիլին ընտրվում է Ու-
կրաինայի կոմ. կուսակցութան Կենտ. կոմիտեյի
անդամ, իսկ մայիսին նշանակվում է Խարկովի Ռազ-
մական Շրջանի զորքերի հրամանատար: Այդ ժամա-
նակ և, վոր նա լիկվիդացիայի յե յենթարկում ատա-
ման Գրիգորևի հրոսակախումբը Ուկրաինայում: Դրա-
նից հետո Աշխատանքի և Պաշտպանություն խորհրդի
Դոնբասի լիագորն և նշանակվում:

1919 թ. նա նշանակվում է XIV-րդ բանակի
հրամանատար: Հուլիսի կիսին նշանակվում է ներքին
Ուկրաինայի ռազմաճակատի զորքերի հրամանատար
և ընտրվում է Բան. գյուղ. պաշտպանություն խոր-
հրդի և Ուկ. Կ. Կ. Կ. Կ. (բ) Քաղբյուրի անդամ:
Ամենաժանր տարին խորհրդային զորքերի Ուկրա-
նայից հետ նահանջելու ժամանակ ընկ. Վարաշիլովը
ընկ. Բուբնովի հետ միասին ղեկավարում է XV-րդ
բանակի զորմասերի կանոնավոր նահանջը: Հոկտեմ-
բերին նա նշանակվում է 61-րդ զիվիզիայի պետ, իսկ
նոյեմբերին I հեծյալ բանակի Ռազմահեղխորհրդի
անդամ: Այդ հեծելազորը, վորը գտնվում էր ընկ-
Բուդյոնու հրամանատարության տակ, միանգամից

սարսուռ եր ազդել խորհրդային հանրապետու-
թյունների բոլոր թշնամիներին:

Ընկ. Բուդյոնու ղեկավարությամբ և ընկ. Վա-
րաշիլովի մասնակցությամբ, I հեծ. բանակը ակտիվ
մասնակցություն և ցույց տալիս գեներալ Դենիկինի
բանակի վոչնչացմանը: Ընկ. Վարաշիլովը I հեծ. բա-
նակի հետ միասին ընթացել է Դենիկինյան, Լեհական
և Վրանդելյան ռազմաճակատներին կատարած փա-
ռավոր հաղթանակների ամբողջ ուղիով:


1921 թ. մարտին ընկ. Վարաշիլովը X կուս.
համագումարի անդամների գլուխ անցած ուղևորվում
է լիկվիդացիայի յենթարկելու Կրոնշտադտի ապստամ-
բությունը և նույն համագումարին ընտրվում է Ռ.
Կ. Կ. Կենտ. կոմ.-ի անդամ:

1921 թ. ապրիլին ընկ. Վարաշիլովը նշանակ-
վում է Հյուս. Կովկասի Ռազմական Շրջանի հրամա-
նատար, մնալով այդ պաշտոնում մինչև 1924 թ. մա-
յիսը: Այդ ժամանակ նա դառնում է Ռ. Կ. Կ. Կ. Կ.
Հարավ-Արևելյան բյուրոյի անդամ:

1924 թ. մայիսին նշանակվում է Մոսկվայի
Ռազմական Շրջանի (ОКРУГ) հրամանատար: 1924 թ.
գարնանից նա Ս. Խ. Հ. Մ. Ռ. Հ. Խ.-ի անդամ է:

1921 թվից ընկ. Վարաշիլովը միշտ ընտրվում է
Հ. Կ. Գ. Կ., Ս. Խ. Հ. Մ. Կ. Գ. Կ. և Ռ. Կ. Կ. (բ)
Կ. Կ.-ի անդամ:

Ընկ. Վարաշիլովը իր տարած ռազմական յե-
րախտիքների (заслуги) համար պարգևատրված է յեր-
կու Կարմիր Դրոշի շքանշանով, վոսկե զենքով, ժամա-
ցույցով և մարտական զենքով (боевое оружие):



Սերգեյ Սերգեյևիչ Կամենև

ՍԵՐԳԵՅ ՍԵՐԳԵՅԵՎԻՉ ԿԱՄԵՆԵՎ

Սերգեյ Սերգեյևիչ Կամենևը ծնվել է 1881 թ. ապրիլի 14-ին Կիևում, զինվորական ճարտարապետ-մեքենագետի ընտանիքում:

Ընկ. Կամենևի խնամքի տակ է Կիևի Կադետական կորպուսում, ապա Ալեքսանդրյան ռազմական դպրոցում, փորն ավարտել է 1900 թ. ոգոտոսին: Զինվորական դպրոցն ավարտելուց հետո, ընկեր Կամենևը նշանակվում է ծառայության 165-րդ Լուցկի հետևակ գունդը, ուր ծառայում է մինչև 1904 թ.: 1904 թ. ընկ. Կամենևը մտնում է զվիսավոր շտաբի ակադեմիան, փորը ավարտում է 1907 թ. առաջին կարգ:

Ակադեմիան փերջացնելուց, ընկ. Կամենևը ծառայում է 165-րդ Լուցկի գնդում, ապա՝ Իրկուտսկի Ռազմական Շրջանում, իսկ 1914 թ. կռվի սկիզբից նշանակվում է Նյուսիսային ճակատի I բանակի շտաբի ավագ համհարգ (адъютант)-ի ոգնական, իսկ հետո գեներալ-կվարտիրմեյստերի բաժնի ավագ համհարգ: Այդ պաշտոնում նա ծառայում է մինչև 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունը: 1917 թվի մարտի 4-ին ընկ. Կամենևը նշանակվում է Պալտավայի հետևակ գնդի հրամանատար, 1917 թ. նոյեմբերին ընկ. Կամենևը նշանակվում է XXV-րդ բանակային կորպուսի (армейский корпус) ապա նույն տարվա դեկտեմբերին III-րդ բանակի շտաբի պետ:

1918 թ. սկզբներին հին բանակը վերջնականապես լուծվում և զորացրման և յենթարկվում: Կազմակերպվում և նոր հեղափոխական բանակ, վորը թույլ էր տիրապետում ռազմական գործին: Դրա փոխարեն Կարմիր բանակի եջերը հարուստ են բազմաթիվ քաջություններով, անվահերություններով և անմոռաց անձնվիրություններով ղեպի բանվորա-գյուղացիական հեղափոխությունը: Հակա-հեղափոխության դեմ մղված կռվում, վորի կողմն էին ամբողջ ղեներալությունը, սպայությունը, յունկերները, մենք կարիք էլինք զգում ռազմական մասնագետների:

Ամենախոշոր ռազմական մասնագետներից մեկն առաջին գլխավոր շտաբականը, վորը անցել է մեր լազերը կառուցելու բան. ~ գյուղացիական Կարմիր բանակը, նրա կազմակերպման առաջին որերից՝ դա Սերգեյ Սերգեյևիչ Կամենևն է: Դեռ ցարական ղեներալներն ուշադրություն էլին դարձնում Սերգեյ Սերգեյևիչի աչքի ընկնող ընդունակությունների վրա: Բայց ընկ. Կամենևնին հաջողվեց իր այդ ընդունակությունները ոգտագործել միայն Կարմիր բանակում:

Ընկ. Կամենևնը Կարմիր բանակ մտնելուց հետո նշանակվում է Արևմտյան ռազմաճակատի Նեվելի շրջանի ռազմական ղեկավար:

Այդ աշխատանքը նա տանում է մինչև ոգոտոտ ամիսը: 1918 թ. ընկ. Կամենևնը նշանակվում է Սմոլենսկի շրջանի ռազմական ղեկավար:

Այդ պաշտոնում նա մնում է կարճ ժամանակ: Սիրիերի կողմից Խորհրդային իշխանության լուրջ սուպտոնալիք է սպասում: Ամբողջ Սիրիերը, Ուրալը, Անգրվորդյան մասը գրավված էր սպիտակ գվարդիականներով. Այդ ժամանակ ընկ. Կամենևնին հանձնարարվում է պատասխանատու խնդիր՝ Արևելյան ռազմա-

ճակատի հրամանատարությունը: Ընկ. Կամենևնը այդ պաշտոնում ղեկավարելով ռազմաճակատը, վճռական զիմադրություն և ցույց տալիս Կուլակին, վոր արդեն մոտեցել էր Վոլգային:

Արևելյան ռազմաճակատի Կարմիր զորամասերը անցնում են հարձակման, անցնում են Ուրալյան լեռնաշղթան և հետապնդում Կուլակին արդեն Սիրիերի հարթության վրա: Հանրապետության Ռազմահեղախոհուրը՝ նշելով ընկ. Կամենևնի ժառուցած աչքի ընկնող ծառայությունը, 1918 թ. հուլիսի 8-ին նշանակում է Խորհրդային հանրապետությունների բոլոր զինված ուժերի գլխավոր հրամանատար:

Սերգեյ Սերգեյևիչի հետագայի աշխատանքը սերտորեն կապված է Կարմիր բանակի կառուցման և պայքարի հետ: Ռազմաճակատները բազմաթիվ են յեղել: Համարյա ամեն տեղ յեղել է ընկ. Կամենևնը, ուղղություն և տվել շտաբների աշխատանքներին, տվել և ռազմական հրամաններ և ցուցումներ:

Ընկ. Կամենևնը գլխավոր հրամանատարության պաշտոնում աշխատել է մինչև 1924 թ. գարնանը: 1924 թ. ապրիլի 1-ից, Կարմիր Բանակի վարչության ընդհանուր վերակազմակերպման պատճառով, ընկ. Կամենևնը նշանակվում է Կարմիր բանակում տեսուչ (ИНСЕКТОР): Նա այդ պաշտոնում աշխատում է մինչև 1925 թ. փետրվար ամիսը, հետո նշանակվում է Բ. Գ. Կ. Բ. շտաբի պետ:

Գլխավոր հրամանատարի պաշտոնի հետ միասին, ընկ. Կամենևնը տարել է նույնպես Կարմիր Բանակի բարձր հրամկադմի Ռազմա-Ակադեմիական դասընթացների պետի պաշտոնը, սկսած զրա բացման որից (1922 թ. հոկտ.) մինչև վերակազմակերպումը (1924 թ. հուլիս):

Ընկ. Կամենսկը խորհրդային Հանրապետութիւնների պաշտպանութեան գործում ցույց տված անխնայեռանդի և ծառայութեան համար, Համ. Կենտ. Գործ. Կոմիտեից ստացել և մի շարք պարգևատրութիւններ՝ Կարմիր Դրոշի շքանշան, Արեւելյան ռազմածառուցում Կոլչակին ջարդ հասցնելու գործողութեան համար՝ վոսկյա զէնք Կարմիր Դրոշի շքանշանով և Պատվի Հրազեն Կարմիր Դրոշի շքանշանով: Բացի դրանից ընկ. Կամենսկը պարգևատրված և խորհրդային Հանրապետութիւնից ռազմական Կարմիր շքանշանով և Բուխարայի Հանրապետութիւնից առաջին աստիճանի Կարմիր Աստղի Պատվանշանով:

Ընկ. Կամենսկը արդեն մի քանի տարի յե, վորանդամ և Համ. Կենտ. Գործադիր Կոմիտեի: Սոց-խորհրդ. Հանր. Միութեան կազմակերպ հետո դասում Ս. խ. Հ. Մ. Կ. Գ. Կ. անդամ:

ԿՈՎԿԱՍՅԱՆ ԿԱՐՄԱԴՐՈՇ ԲԱՆԱԿԻ

ՌԱԶՄԱՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ԱՆԴԱՄՆԵՐԸ



Ս. Ղ. Լուկաշին

Ս. Ղ. ԼՈՒԿԱՇԻՆ

Ընկեր Սարգիս Ղուկասի Լուկաշինը ծնվել և Դոնի Նահանգի Ռոստովի շրջանի Կրիմ գյուղում 1884 թվին գյուղացիական ընտանիքում: Նա մինչև 1896 թիվը մեծացել ու սովորել և գյուղում, այնուհետև նա մտել և Նախիջևանի թեմական դպրոցը: 1901—1902 թվին ավարտելով դպրոցը, մտել և Բագվի գիմնազիան:

Հետագա կրթությունը ընկ. Լուկաշինը ստացել և Պետերբուրգում (Լենինգրադում), վերսեղ սովորել և 1906-ից մինչև 1911 թիվը:

Դեռ աշակերտ յեղած ժամանակին ընկ. Լուկաշինն արդեն 1904 թվին մտնում և սոցիալ-դեմոկրատների կուսակցությունը և 1905 թվին աշակերտություն կազմակերպության մեջ հարում և բոլշևիկների ֆրակցիային:

Դրա հետ միաժամանակ ընկ. Լուկաշինը մասնակցում և բոլշևիկական ուղղություն ունեցող հայկական սոցիալ-դեմոկրատական ուղղանի (թերթի) հրատարակությանը, վերսեղ աշխատում և մինչև 1906 թվի ամառը:

Այդ ժամանակամիջոցում ընկ. Լուկաշինը մի իսկում ընկերների հետ միասին ագիտացիոն և կազմակերպչական աշխատանք և վարում թե աշակերտության և թե Բագվի շրջանի Սև քաղաքի ու Բիրի-Նյրաթի

բանվորական շահասիրների միջև, վորտեղ նա մասնակցել է համարյա բոլոր յեղեցթիւներին:

1906 թվից Պիտերում և ժամանակավորապէս՝ Բաքվում և Բաթումում նա աշխատանք և տարել ուսանողութեան և բանվորութեան մեջ մինչև 1910 թիվը: Այդ թվին նա ձերբակալվում է և աշխուհետե մեկնում է արտասահման: Աքտասահմանից վերադառնալով, նա ավարտում է համալսարանը:

1916 թվին ընկ. Լուկաշինը կանչվում է ցարական բանակ, վորտեղ զինվորների մեջ ազդեցություն և կազմակերպչական գաղտնի աշխատանք է տանում:

1917 թվի փետրվարից նա բացահայտ կազմակերպչական աշխատանք է տանում գլխավորապէս Բաթումում, վորտեղ նա լինում է գիվիդիայի կոմիտեյի մերթ անդամը, մերթ նախագահը, մասնակցում է խորհուրդներին և այլն:

Ընկ. Լուկաշինը տեղիվ կերպով մասնակցում է թե՛ Փետրվարյան և թե՛ Հոկտեմբերյան հեղափոխութեաններին:

1917 թվի նոյեմբերից մինչև 1918 թվի սկիստոս նա ատենաակտիվ կերպով մասնակցել է Կալեդինի, Կրասնովի, Կորնիլովի և այլ բանդանների դեմ մղած պայքարին:

1918 թվի աշնան նա տեղափոխվում է Մոսկվա, վորտեղ աշխատելու յե ընդունվում Համառուսական Արտակարգ Հանձնաժողովում: 1919 թիվը՝ սկզբից մինչև վերջ նա նոր գորահաւաքով անց և կացնում հարավային ճակատում, վորպէս Ռազմահեղափոխական խորհրդին կից՝ քաղաքացիական իշխանութեան կազմակերպութեան վարիչ և վորպէս ՌԿԿ շրջանային բյուրոյի անդամ:

Ընկ. Լուկաշինն ամբողջ ժամանակ զեկաւարում

է թե՛ խորհրդային և թե՛ կուսակցական աշխատանքը: Լինում է խորհուրդներում, գործկոմներում, քաղաքային ու շրջանային նախագահութեաններում, կուսակցութեան շրջանային կոմիտեների անդամ, քարտուղար և բյուրոյի անդամ և այլն:

Մասնակցում է և ընտրվում թե՛ տեղական և թե՛ Համամիութենական կուսակցական և խորհրդային համագումարներին (խորհուրդների 8-րդ համագումար, վորտեղ ընտրվում է Համառուսական Կենտգործկոմի անդամ, կուսակցութեան 10-րդ համագումար և այլն):

Ներկայումս ընկեր Լուկաշինն անդամ է ՍԽՀՄ և Կովկասյան Կարմրադրոշ Բանակի Ռազմահեղափոխական խորհուրդների, Անդրկովկասյան ՍՖՍՀ ժողկոմխորհի Նախագահի տեղակալն է, Անդրկովկասի Պետպլանի նախագահն է, անդամ է Հայաստանի Կոմկուսակցութեան Կենտկոմի քարտուղարութեան, Անդրկովկասի Բանգյուղ-տեսչութեան, ՌԿԿ Անդրկովկասի կոմի, Անդրկովկասի և ՍԽՀՄ Կենտգործկոմների:



ԸՆԿ. ՍԵՐԳՈ ՈՐՋՈՆԻԿԻԶԵ

Ընկ. Սերգո Որջոնիկիձեն Ռուսաստանի Կոմունիստական (բոլշևիկ.) կուսակցության հնազույն անդամներից է, ամենաականավոր բոլշևիկ-հեղափոխականների շարքից՝ ուժոված կազմակերպչական վարչական ձիրքով:

Քաղաքացիական կռիվում նա միշտ ախարիվ մասնակցություն է ցույց տվել բանակի մեջ զանազան Ֆրոնտներում՝ հանձն առնելով Ռազմա-Հեղափոխական Խորհրդի անդամի պատասխանատու պարտականությունը: Կովկասի, և մանավանդ Անդրկովկասի՝ ազատագրումը տեղի ունեցավ նրա անմիջական ղեկավարությամբ:

Ներկայումս ընկ. Որջոնիկիձեն, լինելով մեր բանակի Ռ. Հ. Խ. անդամ, միաժամանակ անդամ է նաև Համամիության Ռազմա-Հեղափոխական Խորհրդի, Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և Ռ. Կ. (Բ.) կուսակցության Կենտ. Կոմիտեյի:



ԸՆԿ. Շ. ԵԼԻԱՎԱ

Ընկ. Շ. Ելիավան ծնվել է 1885 թվին. 1904 թվին մտել է Ս. Դ. Բ. Կ. բոլշևիկական ֆրակցիան։ Կուսակցական աշխատանքներն սկսել է Պետրոգրադում։ 1904 թվի վերջը վերադարձել է Կովկաս, վորտեղ նա մասնակցել է բանվորական շարժմանը։

Վրաստանում ղեկավարելու ժամանակահատվածից և գյուղացիական ապստամբության ժամանակահատվածից հետո, 1906 թվին նա նորից վերադառնում է Պետերբուրգ և շարունակում կուսակցական աշխատանքը։

Առաջին անգամ բանտ է նստել 1904 թ., կրկին՝ 905, 906 թվերին, ինչպես և 907, 909 և 910 թվերին։

Փետրվարյան Հեղափոխության ժամանակ ընկ. Ելիավան գտնվում է Վոլոգդայում, վորտեղ հենց առաջին օրերից նա անցավ բանվորական և զինվորական պատգամավորների խորհրդի գլուխը։

1917 թ. Հոկտեմբերից անդադար աշխատում է ընտրական պաշտոններում, սկսած Գավգործկոմի նախագահությունից և Հ. Կ. Գ. Կ.-ի անգամությունից, և ապա 1919 թվից ֆրոնտներում՝ իրրե բանակի Ռազմա-Հեղափոխական խորհրդի անդամ։

Ներկայումս ընկ. Ելիավան անգամ է Ռ. Կ. Կ. Անդրկ. Յերկրային Կոմիտեյի, և Ս. Ս. Հ. Մ Ռազմա-Հեղափոխական խորհրդի. բացի այդ ընկ. Ելիավան Վրաստանի Ս. Ս. Հ.-ան Ժողկոմխորհի նախագահն է։

Կ. Կ. ՌԱՏՆԵԿ

Կովկասյան կառնադրոս բանակի Ռազմահեղափոխական խորհրդի անդամ յեվ Քաղվարչության պետ

Ընկ. Կարլ Կարլովիչ Ռատնեկը ծնվել է 1894 թվի հունվարի 24-ին Լիֆլանդական նահանգի Վոլմարի գավառի Երրեյի գավառակում գյուղացիական ընտանիքում:

Չավարտելով Վոլմարի ուսուցչական սեմինարիայի դասընթացը, նա Ռիգայում ուսուցչական կոչման քննություն է տալիս:

1910 թվին Ռատնեկն ընդունվում է Կուսակցություն շարքերը և աշխատում է «Վիլնիս» խմբակում:

Աշխատելով գնահատան ձեռնարկություններում, ընկ. Ռատնեկն ապրում է Ռիգայում մեկ ու կես տարի: Այնուհետև նա անցնում է Ալաշի գավառակը (Ռիգայի գավառ), վերտեղ 2 ձմեռ աշխատում է, վորպես գավառակային ուսուցչի ոգնական, միևնույն ժամանակ նա լինում է Կուսակցության կոմիտեի անդամ և Լատվիայի սոցիալ-դեմոկրատների Վենդենի կազմակերպության ակտիվ աշխատող:

1915 թվի հուլիսին նա, վորպես Վոլմար քաղաքում տեղի ունեցած Կուսակցական կոնֆերանսին մասնակցող, մյուս մասնակցողների հետ միասին ձերբակալվում է և տարվում Վոլմարի և ապա Վենդենի

բանտերը, վորտեղ մինչև դատավարությունը մնում է 7 ամիս:

12-րդ Բանակի Ռազմական-միացյալ դատարանը Վենդեն քաղաքում՝ նրան արգարացնում է, վորից հետո նրան անմիջապես ղինվորական ծառայություն էն վերցնում:

Ծառայել է նա 3-րդ հետևակային պահեստի գնդում Պետերհոֆում, վորտեղ և ավարտել է վարժական խումբը: Այնուհետև ավարտելով Լենինգրադի պոլիտեխնիկական ինստիտուտի գաղային գործի դասընթացը և իր գործառքը վերադառնալով, նա սկսում է ծառայել, վորպես գաղային գործի և գնդի քիմիական խմբի հրահանգիչ:

Միևնույն ժամանակ նա չի թողնում Կուսակցական աշխատանքը և անդամ է լինում Պետերհոֆի խորհրդի և Կուսակցություն խմբի և այնուհետև գնդի ու խմբի կոմիտեներին:

1917 թվի ոգոստոսին ընկ. Ռատնեկը խմբի հետ միասին փոխադրվում է Լենինգրադի հրա-քիմիական գումարտակը:

Այստեղ նա լինում է գումարտակի կոմիտեի անդամ, պատգամավոր Սմոլնում տեղի ունեցած կաշադորային խորհրդակցությունը:

Հոկտեմբերյան որերին յունկերների ապստամբություն ժամանակ ընկ. Ռատնեկը լինում է այն յեռյակի անդամ, վորը ղեկավարում է գումարտակը, յերբ սպաները հրաժարվում են դուրս գալ Կերենսկու դեմ: Միևնույն ժամանակ նա լինում է Պետրոգրադի Լատիշյան շրջանի և Լատիշների խմբակների Հյուսիսային կենտրոնի Ագիտպրոպագանդայի անդամ:

1917 թվի գեկտեմբերից մինչև 1918 թվի մարտ

ամիսը ընկ. Ռատնեկը խմբագրում է «Յինյա» թերթը, վոր հրատարակվում էր Լենինգրադում լատիշերեն:

1918 թվի մայիս և հունիս ամիսներին նա վարում է Արագործողկոմատի վերստուգիչ - վերահսկողական հանձնաժողովի անդամի պաշտոն:

1918 թվի հուլիսին ընկ. Ռատնեկը կուսակցական գորահավաքով ուղարկվում է չեխոսլովակների դեմ գործող Արևելյան ճակատի 1-ին հեղափոխական բանակը: 1918 թվի ոգոստոսից մինչև դեկտեմբեր նա նախագահում է բանակի Արտակարգ Հանձնաժողովում և 1919 թվի հունվարին նախագահում է Ռազմական Հեղափոխական Տրիբունալում:

1919 թվի փետրվարից ընկ. Ռատնեկը վարում է սկզբում գինկոմի ոգնականի և ապա գինկոմի պաշտոն I Պենզայի գիվիզայում, վոր հետո վերանվանվեց 20-րդ հրաձիգ գիվիզայի: 20-րդ գիվիզայում ընկ. Ռատնեկը ծառայում է փոքրիկ ընդմիջումներով մինչև 1921 թիվը և այդ ժամանակամիջոցում լինում է Արևելյան, Հարավ-Արևելյան և Կովկասյան ճակատներում:

Նույն այդ պաշտոններով նա ծառայել է 49-րդ գիվիզայում (Արևելյան ճակատում - գինկոմի ոգնական) և 32-րդ գիվիզայում (Կովկասյան ճակատում - գինկոմ):

1922 թվին ընկեր Ռատնեկը Բաթումի Ամրացրած շրջանի Ռազմական Խորհրդի անդամ էր: 1922 թվի հունիսից նա վարում է 1-ին Դիվիզիայի գինկոմի պաշտոնը:

Փետրվարի 22-ից նա ստանձնում է Կովկասյան Կարմրադրոշ Բանակի Քաղվարչության պետի պաշտոնը և 1924 թվի հոկտեմբերի 29-ից նշանակվում է Կով-

Ալասյան Կարմրադրոշ Բանակի Ռազմահեղափոխական Խորհրդի անդամ, վորպիսի պաշտոններում նա մնում է մինչև այժմ:

Ներկայումս ընկ. Ռատնեկն անդամ է ՌԿԿ (բ) Կովկասյան Ֆերկրային կոմիտեյի, Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և Վրաստանի կոմ-Կուսակցություն Կենտրոնական Կոմիտեյի:

10-րդ և 11-րդ Բանակների Ռազմահեղափոխական Խորհրդների կողմից ընկեր Ռատնեկը պարգևատրված է արծաթյա ծխախոտատուփով և ժամացույցով:

Հանրապետության Ռազմահեղափոխական Խորհուրդը Հյուսիսային Կովկասի ռազմական գործողությունների համար ընկ. Ռատնեկին պարգևատրել է Կարմիր Դրոշի շքանշանով:



Յ. Ա. Ի. ԿՈՐԿ

(Քանակի հրամանատար)

Ընկ. Ավգուստ Իվանովիչ Կորկը ծնվել է 1887 թվի Ուդստոսի 4-ին Լիֆլանդական նահանգի, Յուրյեվի գավառի, Գեդելաուսի գավառակի Արդլակյուլյա գյուղում:

Նրա ծնողները հողագուրկ գյուղացիներ են լի-

զել: Չնայած նյութական ծանր դրություն նրանք կարողացան իրենց վորդուն բավականաչափ կրթություն տալ, նա ավարտել է ստորին և ապա քաղաքական դպրոցները:

Քաղաքային դպրոցը ավարտելուց հետո ընկ. Կորկը 1905 թվին մտնում է Վիլնայի հետեակային յունկերական դպրոցը, վորտեղից 1907 թվին փոխադրվում է Չուգուլեվի յունկերական դպրոցը, իսկ այստեղից էլ 1908 թվին, վորպես սպա՝ ուղարկվում է Յուրյեվի 98-րդ հետեակային գունդը:

1922 թվին ընկ. Կորկը մտնում է Գերագույն Շտաբի Ակադեմիա, վորն ավարտում է 1914 թվին և հաշվառվում է Գերագույն շտաբում: Լենինգրադից նա մեկնում է գեպի իր պաշտոնավայրը, — Վիլնայի Ռազմական շրջանի՝ շտաբը և գորահավաքից հետո ընկ. Կորկը շուտով ընկնում է իմպերիալիստական պատերազմի ճակատը:

Իմպերիալիստական պատերազմը նա անց է կացնում զանազան շտաբներում (20-րդ գորամարմնի, Սիբիրի 3-րդ գորամարմնի, Սիբիրի 8-րդ զինվորային, 10-րդ բանակի և Արևմտյան ճակատի շտաբներում):

Փետրվարյան հեղափոխությունից առաջ ընկ. Կորկը Արևմտյան ճակատի Շտաբումն էր ողագնացության շտաբ—օֆիցերի պաշտոնով:

Փետրվարյան հեղափոխությունից հետո ընկ. Կորկը մնաց Արևմտյան ճակատի Շտաբում:

1918 թվի հուլիսին ընկ. Կորկը, վորպես կամավոր մտնում է Կարմիր բանակի շարքերը և ստանձնում է Համառուսական Գլխավոր Շտաբի ուղերատիվ բաժնի, Արևմտյան ճակատի գործավարության կրտսեր գործավարի պաշտոնը:

1918 թվի հոկտեմբերի 14-ին նա նշանակվում է XI բանակի Շտաբի Ուղերատիվ—հետախուզական բաժնի պետ, 1918 թվի դեկտեմբերի 1-ին նա ստանձնում է Եսաղանդական Աշխատավոր կոմունայի Ռազմ-ժողովի խորհրդավորի (կոնսուլտատի) պաշտոնը և 1918 թվի դեկտեմբերի 19-ին նշանակվում է Եսաղանդական բանակի Շտաբի պետ:

1919 թվի հուլիսի 1-ից նա վարում է 7-րդ բանակի հրամանատարի ոգնականի պաշտոն, իսկ հուլիսի 31-ից ստանձնում է 15-րդ բանակի հրամանատարի պաշտոնը:

1920 թվի հոկտեմբերի 21-ից ընկ. Կորկը նշանակվում է 6-րդ բանակի հրամանատար:

Պերեկոպի և Յուշումի ամրացրած դիրքերը զբաղեցրել և հակառակորդին յեռանդուն կերպով հետապնդելու համար Հանրապետության ՌազմաՀեղափոխական Խորհուրդը ընկ. Կորկին պարգևատրվում է Հեղափոխական պատվավոր Ձեռքով: Բացի զրանից ընկ. Կորկը Յուդենիչի դեմ վարած զործողությունների և սպիտակ լեհերի դեմ գործած յերթի համար պարգևատրված է Կարմիր Դրոշի յերկու շքանշանով:

1921 թվի Մայիսի 13-ին ընկ. Կորկը նշանակվում է Խարկովի Ռազմական շրջանի զորքերի հրամանատար: 1922 թվի հուլիսի 16-ին՝ Ուկրաինայի և Կրիմի զինված ուժերի հրամանատարի ոգնական, 1922 թվի հոկտեմբերի 6-ին Թուրքեստանի ճակատի զորքերի հրամանատար, 1923 թվի հուլիսի 12-ին՝ հանրապետության Բանվորազյուզացիական Կարմիր Նավատորմի զլխավոր վարչության պետի ոգնական, 1923 թվի դեկտեմբերի 13-ին Արևմտյան ռազմական շրջան

նի զորքերի հրամանատարի ոգնական և 1924 թվի ապրիլի 6-ին՝ հուլյն շրջանի զորքերի հրամանատար:

1925 թվի փետրվարի 7-ին ընկ. Կորկը նշանակվում է Կովկասյան Կարմրագրոշ բանակի հրամանատար, փորպիսի պաշտոնը նա վարում է մինչև այժմ:



Կրտ. № 173 բ. Տիրած 1500. Պատվ. № 5131.
Տպագրական տրեստի 2-րդ տպարան, Յերեվան.

ՀՀ Ազգային գրադարան



NL0206898

40. 643